

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ. «ԷՐՏՈՂԱՆԻ ՀԵՏ ԶՈՎԱՅՈՒՅԻՉ ԽՄԵԼՈՒՄ ԶԱՄԱՐ ՊԻՏԻ ՀԱՆԳԻՊԻՆԵՔ: ՄԵՆՔ ՅՍՏԱԿ ՕՐԱԿԱՐԳ ՈՒՆԻՆԵՔ, ԱՅՆ ԱԼ ԹՐՔԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՀՈՂԵՐԷՆ ՔԱՇՈՒՆ Է»



Զորեքշաբթի, 9 Օգոստոս 2023-ին, «Sky News Arabia» պատկերասփիռային կայանը հարցազրույց ունեցավ Սուրիոյ Նախագահի Պաշտար ալ-Ասատի հետ: Ստորև կը ներկայացնենք նախագահին արտայայտած գլխավոր միտքերը.

«Մենք կարելիութիւն ունենք պատերազմէն խուսա-

Շար. Էջ 6 >

ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՍՏԻ ՂԱՏԱՊԱՐՏԵՅՑ ՏԵՐ ԶՕՐԻ ՄԵՉ ԱՄՆ-Ի ՈՏՆՁՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը ԱՄՆ-ի ուժերուն եւ անոնց ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն կողմէ Տեր Զօրի արուարձանին մէջ սուրիական բանակի փոխարդակառքի իրականութիւնն ու անոր հետեւանքով գոհերու եւ վիրաւորներու արձանագրումը ոճիր համարեց: Նախարարութիւնը հաղորդագրութեամբ շեշտեց, որ սոյն արարքով ԱՄՆ Սուրիոյ դէմ որդեգրած իր թշնամական քաղաքականութիւնը կը շարունակէ եւ իրեն հովանաւորող զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն, ներառեալ ՏԱՅԵՇ-ին գօրակցութիւն կը յայտնէ:



Նախարարութիւնը աւելցուց. «Սոյն ցաւալի դէպքը կը վերոյիշեցնէ մեզ 17 Սեպտեմբեր 2016-ին Տեր Զօրի արուարձանի Սարտալէրան մէջ գտնուող սուրիական բանակի կեդրոններուն դէմ ԱՄՆ-ի իրագործած յարձակումը, որպէսզի օրին ՏԱՅԵՇ-ի զինեալ ահաբեկչական խմբաւորումը յաջողէր իր հսկողութեան տակ առնել այդ շրջանը: Սակայն սուրիական բանակը մեծ զոհողութիւններու գնով պաշտպանեց շրջանը»:

Նախարարութիւնը եզրափակելով շեշտեց, որ Սուրիան յանձնառու կը մնայ շարունակելու ահաբեկչութեան դէմ իր պատերազմը, մինչեւ որ ազատագրէ սուրիական հողերը ամբողջական, իսրայելեան եւ թրքական ուժերէն:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԷԼԵԻ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԸ ԿՈՉ ԿՈՒՂԸ ՂԱԿԵՅՆԵԼՈՒ ԱՐՅԱՆԻ ՇՐՋԱՓՈՎՈՒՄԸ

Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը (ՄԱԵԽ) «Արցախի 120. 000 բնակիչները մարդասիրական տագնապի մէջ են» վերնագիրով յայտարարութիւն մը կատարեց՝ կոչ ուղղելով միջազգային համայնքին եւ յատկապէս Ատրպէյճանին անյապաղ վերջ տալու Արցախի շրջափակումին: Սոյն կոչին մէջ, անդրադարձ կատարելէ ետք Արցախի ժողովուրդին դիմագրաւած մարդասիրական տագնապին



ամնչուած զանազան երեւոյթներուն ու հետեւանքներուն, Եկեղեցիներու Խորհուրդը անընդունելի կը նկատէ Բերձորի (Լաչին) միջանցքին փակումը՝ զայն նկատելով մարդկային ոճիր եւ հակառակ միջազգային օրէնքին: Ներկայ պայմաններուն մէջ, Խորհուրդը ընկերային ցանցերը ազդու միջոց կը նկատէ աշխարհին ուշադրութեան յանձնելու Արցախի տագնապը, նկատի ունենալով Ատրպէյճանի շարունակուող անտարբերութիւնը՝ միջազգային իրաւական եւ քաղաքական կառոյցներու կոչին նկատմամբ:

ԱՐՅԱՆԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹ ՀՐԱՄԱՅՈՒՄ Է՝

Խոր մտահոգութեամբ կը հետեւինք Արցախի պարզած ներկայ ճգնաժամային կացութեան: Շրջափակումի ենթարկուած Արցախէն ներս մեր ազ-



գին զաւակները սովամահ ըլլալու անմիջական վտանգին ենթակայ են: Մեր ժողովուրդի հոծ բազմութեան ներկայութեան, կ'ուզենք բարձրագոյն

Շար. Էջ 4 >

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

* Ներկայ գրութիւնը պատճենն է Ս. Աստուածածին Վանքի «Ուխտի Օր»-ուն անոթով ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տուած պատգամին, ուղղուած Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի շրջափակին մէջ համախմբուած մեր ժողովուրդի զաւակներուն. Ծաբաթ, 12 Օգոստոս 2023:

Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԲԵՏԱՊԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԵՉ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱՂՈՐԶՆԵՔ

Կիրակի, 13 Օգոստոս 2023-ին, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով, ասանդութիւնը պահելով, Բերիոյ Հայոց Թեմի Բարեշնչան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան եպիսկոպոսական Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց, իր հայրական պատգամը ուղղեց ժողովուրդին եւ խաղողօրինեք կատարեց՝ Բեսապի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ,



Ներկայութեամբ՝ Ազգ. Վարչութեան անդամ Արմեն Գասպարեանի, Բեսապի թաղական խորհուրդին, բարեսիրական, մարզական եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներուն եւ խումներամ ժողովուրդին:

«Հրաշափառ» շարականի երգեցողութեան ներքոյ, Սրբազան Հայրը թափօրով մուտք գործեց եկեղեցի: Սրբազան Հօր ամընթերականներն էին՝ Ազգ. Կրօնական Ժողովի ատենապետ Հոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Բեսապի հոգեւոր տեսուչ Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեան: Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին նուիրուած շարականներու հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր հայրական պատգամը ուղղեց ժողովուրդին, բնաբան ունենալով Աստուածամոր նուիրուած շարականի բառերը. «Աթոռ քերովբեական եւ փառք մայր Բանին մարմնացելոյ, զԱստուա-

Շար. Էջ 12 >

Խմբագրական

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԸ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴՈՒՌ ՓԱԿ ԶՅԱՄԱՐԵՑ

Սուրիոյ Նախագահին հարցազրոյցը «Սքայ Նիւզ Արապիք» կայանին հետ կարելոր սկատառումներ ունէր, յատկապէս տարբեր երկիրներու հետ յարաբերութիւններու բաց ըլլալուն առումով:

Արաբական երկիրները յանդուգն քայլով մը Սուրիան Արաբական Լիկա վերադարձուցին, սակայն հարցազրոյցին տողատակերուն տակ Նախագահը կը շեշտէր, որ օտար երկիրներու ախորժակներուն առիթ չընծայելու համար Սուրիոյ հետ արաբական երկիրներուն յարաբերութիւնները պէտք է պատերազմին հետեւանքով երկրին քանդուած ենթակառոցներու վերականգնումին նպաստեն, որպէսզի Սուրիոյ տնտեսութիւնը կարենայ ոտքի կանգնիլ ու աստիճանաբար ապաքինիլ, ինչ որ երկար ժամանակի կը կարօտի բնականաբար: Նախագահը կը շեշտէր նաեւ, որ լաւատեսութեամբ կը նայի արաբական երկիրներու հետ յարաբերութիւններու ապագային եւ անցեալին պատահածները կը թողու անցեալին մէջ:

Աստուտ տարբեր երկիրներու հետ յարաբերութիւններու վերականգնումի դուռը փակ չհամարեց, սակայն վերահաստատեց իր սկզբունքները շեշտելով, որ Թուրքիոյ պարագային յարաբերութիւններու վերականգնումը կարելի չէ մինչեւ այն ատեն որ թրքական ուժերը դուրս չեն եկած սուրիական հողերէն եւ չէ դադրած Թուրքիոյ աջակցութիւնը հիւսիսային շրջանի զինեալ խմբաւորումներուն:

Այս առումով Նախագահը չենթարկուեցաւ վերջին շրջանի ռուսական ճնշումներուն Թուրքիոյ հետ յարաբերութիւններու հապճեպ կարգաւորման ուղղուելով, այլ մնաց հայրենիքին համար պայքարող ղեկավարի իր սկզբունքներուն վրայ՝ վերառնելով երկրի ամբողջական ազատագրման կարելորութիւնը, տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը:

Ինչ կը վերաբերի Լիբանանի հետ յարաբերութիւններուն, Նախագահը յստակօրէն յայտնեց որ ոչ մէկ քաղաքական ուժի կողմ պիտի ըլլայ, ընդհակառակն. Նեցուկ պիտի կանգնի Լիբանանի ազգային շահերուն:

Միւս կողմէ անդրադառնալով Միացեալ Նահանգներու հետ յարաբերութիւններուն, խորհրդակցութիւններու դուռը բաց համարելով մէկտեղ Նախագահը յայտնեց, որ որեւէ երկրի հետ յարաբերութիւնը երկխօսութեան եւ ոչ թէ միակողմանի պահանջներով կրնայ ընթանալ: Ինչ որ կրնայ Սուրիոյ նկատմամբ ԱՄՆ-ի մօտեցումը վերատեսութեան ենթարկելու սլաք մը ըլլալ:

Ինչ կը վերաբերի տնտեսական կեանքին, Նախագահին խօսքը, ինչպէս նաեւ գնաճի բարձրացման, սղաճին, սուրիական լիրային անկումին ներկայ տուեալները ցոյց կու տան, որ տնտեսութիւնը պիտի շարունակէ ապրիլ խարխափումներ, գնաճի, ինչպէս նաեւ աղքատութեան տոկոսը պիտի բարձրանայ մինչեւ երկրի ենթակառոցներու վերականգնումն ու Սուրիոյ քարիւղի հանքերուն ու հիւսիսային շրջանին վերջնական ազատագրումը: Այդ պարագային միայն կրնանք ականատեսը ըլլալ սուրիական տնտեսութեան կտրուկ ապաքինման:

«Գ.»

-Զորքշարքի, 16 Օգոստոս 2023-ին, Սուրիոյ Նախագահ, սուրիական բանակի ընդհանուր հրամանատար Պաշար ալ-Ասատ վարչական հրամանագիր մը հրապարակեց: Զրամանագիրին համաձայն զօրացրումի կ'ենթարկուին հետեւեալ զինուորական կարգերը ունեցող զինուորական ծառայողները՝

♦ 1 Զոկտեմբեր 2023-ին՝ պահեստի կոչուած սպաները եւ ուսանող սպաները, որոնք կը բոլորեն երկու տարուան իրենց ծառայութիւնը՝ մինչեւ 30 Սեպտեմբեր 2023:

♦ 1 Զոկտեմբեր 2023-ին՝ հետեւեալ զինուորական պարագայ ունեցող աստիճանաւոր սպաները եւ զինուորները:

♦ Պահեստի կոչուած աստիճանաւոր սպաները եւ զինուորները, որոնք կը բոլորեն իրենց վեցուկէ տարուան զինուորական պահեստային ծառայութիւնը՝ մինչեւ 30 Սեպտեմբեր 2023:

♦ 1984-ի ծնունդ աստիճանաւոր սպաները եւ զինուորները, որոնք կը բոլորեն իրենց երկուքուկէ տարուան պահեստային զինուորական ծառայութիւնը՝ մինչեւ 30 Սեպտեմբեր 2023:

-Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ հրապարակեց 11 եւ 12 թուակիր գոյգ օրէնսդրական հրամանագրերը, որոնց համաձայն կառավարական քաղաքային, զինուորական եւ հանգըստեան կոչուած բոլոր պաշտօնեաներուն ամսականները 100% համեմատութեամբ յաւելում պիտի արձանագրէ:

-Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ սուրիական դպրոցներէն ներս 2023-2024 տարեշրջանը պիտի սկսի Կիրակի, 3 Սեպտեմբեր 2023-ին, իսկ վարչական պաշտօնեաները եւ ուսուցչական կազմը աշխատանքի պիտի սկսին յառաջիկայ Կիրակի, 27 Օգոստոս 2023-ին:

-Սուրիոյ Ներքին Առեւտուրի Նախարարութիւնը բարձրացուց մագութի, պենզինի, ֆիուլի եւ կազի գիները, շեշտելով, որ հացին գինը որեւէ փոփոխութեան չենթարկուեցաւ: Նախարարութիւնը յայտնեց, որ քաղաքացիներու օգտագործման մագութի 1 լիթրին գինը հասաւ 2000 ս.ն.-ի, պենզին օքթան 90-ինը՝ 8000 ս.ն.ի, իսկ օքթան 95-ինը՝ 13.500 ս.ն.-ի:



Լուրեր Հայաշխարհին

ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՇԱՐՅՈՎ, ԴԻՄԱԾ Է ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

11 Օգոստոսին Հայաստանի Հանրապետությունը դիմած է Միացեալ Ազգերու Կազմակերպության Անվտանգության խորհուրդ՝ Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության հարկադրուած լիակատար շրջափակման հետեւանքով մարդասիրական իրավիճակի վատթարացման առնչութեամբ արտահերթ նիստ գումարելու պահանջով:



ՄԱԿ-ի ՀՀ մշտական ներկայացուցիչ Միքե Մարգարեան ՄԱԿ-ի Ազգային Խորհուրդի նախագահին ուղղուած նամակին մէջ, մասնաւորապէս, յայտնած է.

«... 15 Յունիս 2023-ին սրեցաւ, մասնաւորաբար, շտապ օգնութեան ապրանքներու՝ սննդամթերքի, դեղորայքի եւ վառելիքի ծայրայեղ պակասը, երբ Ատրպէյճան ամբողջութեամբ փակեց Լաչինի միջանցքը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ մերժելով որեւէ տեսակի մուտք Լեռնային Ղարաբաղ, Նոյնիսկ մարդասիրական: Ատրպէյճանի կողմէն Լեռնային Ղարաբաղ բնական կազմի եւ ելեկտրականութեան մատակարարման կանխամտածուած շարունակական խափանումները ծայրայեղ վնաս պատճառած են տուժած բնակչութեան եւ անոնց կենսագործունէութեան:

Յղում կատարելով ՄԱԿ Անվտանգութեան Խորհուրդի նախագահին ուղղուած 31 Սեպտեմբեր 2022-ին ՄԱԿ-ի ՀՀ մշտական ներկայացուցիչի նամակին (S/2022/688) եւ 20 Դեկտեմբեր 2022-ին գումարուած Անվտանգութեան Խորհուրդի նիստին յաջորդիւ՝ կը հայցենք ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի արտահերթ նիստի ժողովին՝ համաձայն ՄԱԿ կանոնադրութեան 35-րդ յօդուածի 1-ին մասին»:

ՍՈՒՐԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՈՒՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻՍԻ ԻՍԿԷՆԵԱՆ ԸՆՈՐՀԱՌՐԵՅ ԱՐՅԱՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆԸ

Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան, Սուրիա-Հայաստան բարեկամական խումբի նախագահ դոկտ. Լիսի Իսկէնեան շնորհաւորական նամակ յղեց Արցախի Հանրապետութեան Նորընտիր նախագահ Դաւիթ Իշխանեանին:

Նամակին մէջ Իսկէնեան յայտնեց.

«Նորին Վսեմութիւն տիար Դաւիթ Իշխանեան

Նախագահ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի.

Մեծարգոյ պրն. նախագահ,

Ձերմապէս կը շնորհաւորեմ Ձեր ընտրութիւնը Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահի պաշտօնին:

Արցախի ճակատագրական այս օրերուն, Ձեզի վրտահուած պատասխանատուութիւնը եւ յանձնառութիւնը ծանր են: Այդուհանդերձ կը հաւատամ, որ դուք ձեռնհասօրէն պիտի գործէք՝ յանուն Արցախի ինքնութեան պահպանման եւ գոյատեւման:

Ձեր ճանապարհը թէւս փշոտ է, բայց Ձեր աննկուն կամքով ու հաստատ հաւատքով պիտի յաղթահարէք ամէն խոչընդոտ:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝



Դոկտ. Լիսի Իսկէնեան
Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխան եւ
Սուրիա-Հայաստան Բարեկամական Խումբի նախագահ »:

ԸՆՈՐՀԱՌՐԱՆՔՆԵՐ ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆԻՆ՝ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ

Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան շնորհաւորած է Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ Դաւիթ Իշխանեանը: Ընտրաւորագիրին մէջ ըսուած է.

«Նորին Վսեմութիւն տիար Դաւիթ Իշխանեան, նախագահ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի.

Մեծարգոյ պրն. նախագահ,

Ձերմապէս կը շնորհաւորեմ Ձեր ընտրութիւնը Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահի պաշտօնին:



Ներկայ դժուարին պայմաններուն, երբ Արցախն ու արցախահայութիւնը կը դիմագրաւեն ճակատագրական լուրջ մարտահրաւերներ, անձնապէս ճանչնալով ձեզ, ձեր հաստատակամ սկզբունքային կեցուածքներն ու համոզումները, կը հաւատամ, որ պիտի կարենաք լիիրաւ յանձնառութեամբ ձեռնհասօրէն կատարել եւ արդարացնել Արցախի եւ իր անուած բնակիչներու ինքնութեան պահպանման եւ ինքնիշխան գոյատեւման պատասխանատու եւ ծանր պարտականութիւնը. վստահ եղէ՛ք, որ միշտ ձեր կողքին պիտի գտնէք իր ինքնապատկանելիութեան եւ արժանապատուութեան գիտակից որջ հայութիւնը, որուն ամէնօրեայ ուշադրութեան եւ զօրակցութեան կից կ'եղան եղած է եւ Է Արցախն ու արցախահայութեան հարցը իր բոլոր երեսներով:

Միշտ ձեր կողքին, յաջողութեան մաղթանքներով՝

Ժիրայր Ռէիսեան
Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխան»:

ԱՐՅԱՄԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԽԱՂԱՊՊԱՆՆԵՐԸ ԿԸ ԴԱՅԱՆՁԷ ԲԱՅՆԵՐՈՒ ԶԵՆԱՐԿԵԼ՝ ԶՄՊԵԼՈՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԱԽԱՆԿԱՆ ՍԱՐԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արցախի Արտաքին Գործոց նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է Ատրպէյճանի տարածած ապատեղեկատուութեան առնչութեամբ, թէ իբր Պաշտպանութեան Բանակը գիտուորական ուժ տեղաշարժած է կեդրոնացուցած է շփման գիծի տարբեր ուղղութիւններու վրայ: Նախարարութեան Նշած են, որ Ատրպէյճան Արցախի մէջ իրադրութեան լարման կ'ուղղուի ՄԱԿ-ի Ազգային Խորհուրդի նիստ գումարելու պահանջէն երկու օր անց. «Կը պահանջենք միջազգային բոլոր դերակատարներէն եւ, մասնաւորապէս Ռուսիոյ խաղաղապահ զօրակազմէն անյապադօրէն ձեռնարկելու համապատասխան քայլերու՝ զըսպելու Ատրպէյճանի հաւանական սարդիչ գործողութիւնները»:

Յայտարարութիւնը ամբողջութեամբ կը ներկայացնենք ստորեւ.



«Արցախի Հանրապետութեան Արտաքին Գործոց նախարարութիւնը կտրականապէս կը հերքէ եւ խստիւ կը դատապարտէ ստրպէյճանական լրատուամիջոցներու կողմէն տարածուող ստալոյ լուրերը այն մասին, թէ իբր Արցախի Պաշտպանութեան Բանակը տարատեսակ գիտուորական ուժ տեղաշարժած է կեդրոնացուցած է շփման գիծի տարբեր ուղղութիւններով:

Տեղեկատուական դաշտը նման կեղծ լուրերով լեցնելով, ինչպէս արդէն բազմիցս առիթ ունեցած ենք համոզուելու, Ատրպէյճան հող կը նախապատասխտէ հետագայ սարդանքներու իրականացման համար:

Միջազգային դերակատարներու եւ յատկապէս ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի ուշադրութիւնը կը հրաւիրենք այն փաստին վրայ, որ Ատրպէյճան իրադրութեան լարման կ'ուղղուի Արցախի խաղաղ բնակչութեան պարտադրուած լիակատար շրջափակման հետեւանքով մարդասիրական իրավիճակի վատթարացման առնչութեամբ ՄԱԿ-ի Ազգային Խորհուրդի արտակարգ նիստ գումարելու Հայաստանի Հանրապետութեան պահանջներով:

ԱՐՅԱՆՍԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ...

Սկիզբ է 1

աստիճանի կարելու դեպքում անդրադառնալ համայն մեր ազգը յուզող ու տագնապեցնող Արցախի հարցին, Հայրապետական Մեր պատգամը ուղղելով հինգ հասցեներու:

- Մեր Առաջին պատգամը ուղղուած է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻԾԵԱՆՈՒԹԵԱՆ: Կ'անդրադառնալ արդեօք, թէ իր որդեգրած մօտեցումները Արցախը կըրնան ջնջել հայ կեանքի քարտեզէն, ցեղասպանութեան մատնել 120 հազար հայորդիները, միաժամանակ վտանգելով նաեւ Հայաստանի ապագան: Ինչպէ՞ս կարելի է Ատրպեյճանի հողային ամբողջականութիւնը ճանչնալու խոստումներ կատարել, առանց ապահովելու իր անվտանգութիւնն ու ինքնուրոյնութիւնը երաշխաւորող Արցախի ինքնորոշման արդար իրաւունքը: Ինչպէ՞ս կարելի է շրջանէն ներս, այսպէս կոչուած, ամբողջական խաղաղութեան հաստատման ի խնդիր պատրաստ ըլլալ յանձնառութիւններ կատարելու, երբ նման մօտեցում կրնայ վտանգել ո՛չ միայն Արցախը, այլ նաեւ Հայաստանի ամբողջականութիւնը, եւ նոյնիսկ՝ գոյութիւնը: Հայաստանն ու Արցախը շրջապատող ներկայ վտանգալից պայմաններուն մէջ, եւ աշխարհաքաղաքական նոր գարգացումներու լոյսին տակ, առաջին, անհրաժեշտ է, որ Հայաստան բարեկամութեան ու ենթակայութեան, իր շահերուն եւ ուրիշներու շահերուն սահմանները յստակօրէն գտնորոշող դիրքորոշումներ որդեգրէ եւ աշխուրջ ըլլալ Հայաստանը չվերածելու Արեւելքի եւ Արեւմուտքի լարուածութեան հարթակի, որուն հետեւանքները կրնան ծանր ըլլալ Հայաստանի համար: Երկրորդ, Ատրպեյճանի հետ բանակցութիւններու ընթացքին հարկ է, որ Հայաստան դուրս գայ պարտուած ըլլալու հոգեվիճակէն եւ սոսկ զիջումներ կատարելու կացութենէն: Եւ աւելին, Հայաստան պէտք է առկախէ բոլոր բանակցութիւնները Ատրպեյճանի հետ, մինչեւ որ վերջ գտնէ Արցախի շրջափակումը Ատրպեյճանի կողմէ: Հարկ է շարունակ յիշեցնել բոլորին, որ մարդասիրական աղէտ ստեղծելով քաղաքական շահեր հետապնդելը համամարդկային ոճիր է, եւ հակառակ՝ միջազգային օրէնքին: Երրորդ, ճիշդ է, որ հարկ է խուսափիլ նոր պատերազմէն. սակայն, այս չի նշանակեր տեղի տալ Ատրպեյճանի տակաւ բազմաճյուղ պահանջներուն: Անհրաժեշտ է որդեգրել ճկուն, բայց մարտունակ գործելանոճ, միշտ մեկնելով պատմականօրէն հաստատուած եւ միջազգային ճանաչում ստացած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակէն: Այլ խօսքով, պէտք է մերժել որեւէ մօտեցում, որ Արցախը կը նկատուի Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան անբաժան մաս: Հետեւաբար, կ'ուզենք կարելու որութեամբ շեշտել, թէ շրջափակումին կարելի փութով վերջ տալը եւ Արցախի ինքնորոշման կարգավիճակը առաւել շեշտաւորումով միջազգային հարթակ բերելը, պէտք է կիզակետը դառնան Հայաստանի իշխանութեան արտաքին քաղաքականութեան: Այս համահայկական հրամայականին լոյսին տակ եւ ներկայ ճակատագրական պայմաններուն մէջ, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Մեր առաջարկն է, որ իշխանութեան, ընդդիմութեան ու Սփիւռքի ներկայացուցիչներէ բաղկացած քաղաքական ու դիւանագիտական հարուստ փորձառութիւն ունեցող մարմին մը, իր ետին ունենալով մեր ողջ ժողովուրդին նեցունկն ու վստահութիւնը, ամբողջական պատասխանատուութիւն ստանձնէ, մեր պատմութեան այս ճակատագրական շրջանին, վարելու Ատրպեյճանի հետ տարուող բանակցութիւնները, բնականաբար՝ նոր ոճով ու նոր մօտեցումով:

- Մեր երկրորդ պատգամը ուղղուած է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆ: Մեզի համար տարօրինակ է, Արցախի ժողովուրդին պարզած ներկայ ողբերգական կացութեան դիմաց Հայաստանի ժողովուրդին լռութիւնը, աւելի ճիշդ՝ անտարբերութիւնը: Մեր եղբայրներն ու քոյրերը եւ մեր երեխաները սովամահ ըլլալու վիճակին մէջ կը գտնուին. դուք ի՞նչ կ'ընէք. փողոց իջէք, ինչի՞ կը սպասէք. աշխարհը մեզ կը դիտէ. ժողովուրդին ձայնը գերիվեր է բոլոր տեսակի ձայներէն ու տեսակետներէն: Ձեր ժամանակը մի՛ վատնէք ապառաջ քննադատութիւններով, փոխադարձ մեղադրանքներով, բացուած ճեղքերը աւելի խորացնելով: Ոտքի ելէ՛ք, արդարութիւն պահանջեցէ՛ք աշխարհէն: Հայաստանի մէջ կեանքը չի կրնար բնական ըլլալ, երբ անդին ծայրայեղօրէն անբնական է կեանքը Արցախի մէջ: Մեր ազգին միասնականութիւնը ու հաւաքական վճռակամութիւնը ցոյց տուէք գործնապէս՝ ձեր դիմաց կանգնած արինաբրու ազերիին:

- Մեր երրորդ պատգամը ուղղուած է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ: Երբ 1915-ին ծրագրուած կերպով Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս Ցեղասպանութիւն կը կատարուէր հայ ժողովուրդին դէմ, ըսինք ու միշտ պիտի ըսենք՝ ո՛ր էր միջազգային համայնքը: Ցեղասպանութեան վտանգին ենթակայ Արցախին դիմաց նոյնը կը կրկնենք այսօր. ո՛ր է միջազգային համայնքը: Ատրպեյճանը կը շարունակէ խախտել իր ստորագրած համաձայնագրի պայմանները, ու նոյնիսկ ազատօրէն մուտք կը գործէ Հայաստանի սահմաններէն ներս. ո՛ր է միջազգային համայնքը: Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը, Եւրոպական Խորհուրդը, միջազգային իրաւական կառոյցները կը պահանջեն անյապաղ կերպով Արցախի շուտափոյթ ապաշրջափակումը. սակայն, Ատրպեյճան կը մնայ խուլ՝ անտեսելով միջազգային օրէնքի հիմնական սկզբունքները: Ատրպեյճանի անպատժելիութեան գինը փաստօրէն կը վճարեն Արցախն ու Հայաստանը: Ճիշդ է, կարգ մը բարեկամ երկիրներ իրենց համակրանքը ու զօրակցութիւնը յայտնեցին, ոմանք նոյնիսկ մարդասիրական օժանդակութիւն կատարեցին Արցախին: Ձերմ շնորհակալութիւն բոլորին: Սակայն հաց եւ դեղ դրկելով Ար-

ցախ, ստեղծուած տագնապը չի լուծուիր. մարդասիրական ճիգերէն անդին, հրամայական է Արցախին անվտանգութիւնը ապահովել՝ ինքնորոշման իրաւունքը ճանչնալով: Հետեւաբար, Մեր սպասումն է, որ յատկապէս մեծ պետութիւններ դիմեն գործնական քայլերու, առաջին հերթին ստիպելով Ատրպեյճանը, որ վերջ տայ Արցախի շրջափակումին եւ ապա քաղաքական բանակցութիւններու ճամբով ճանչնան Արցախի ինքնորոշումը՝ միջազգային հովանաւորութեան ներքեւ:

- Մեր չորրորդ պատգամը ուղղուած է ՍՓԻՒՐՔԻՆ: Սփիւռքը միշտ գործնապէս եղած է Արցախի կողքին՝ տնտեսական, բարեսիրական, քաղաքական ու քարոզչական հսկայ ներդրում կատարելով ի խնդիր Արցախի հզօրացման ու զարգացման: Սփիւռքին կողմէ ցարդ կատարուած զօրակցութիւնը անհրաժեշտ է, որ աւելի լայն ծաւալ ստանայ: Արցախը կ'ուղղուի դէպի կործանում: Արցախը առանձին պէտք չէ ձգել: Իւրաքանչիւր հայ եւ ողջ հայութիւնը նուիրական պարտաւորութիւն ունի Արցախին նկատմամբ: Արցախի փրկութիւնը համահայկական առաջնահերթութիւն է: Սփիւռքը, իր աշխատանքը ներդաշնակելով Արցախի իշխանութեան հետ, կոչուած է դիմելու այնպիսի ազդու միջոցներու, որոնք կարենան Արցախի ներքին ու ժակնականութիւնը ամրապնդել եւ արտաքին աշխարհէն ներս Արցախի ժողովուրդին ինքնորոշման անյետաձգելի հրամայականը շեշտել: Այս ուղղութեամբ անհրաժեշտ է, առաջին հերթին, Սփիւռքի մարդուժը ու ներուժը համախմբել. երկրորդ, աշխատանքային յստակ օրակարգ կազմել ու թիրախներ ճշդել. եւ երրորդ, տեղեկատուական մարզէն ներս ծրագրուած լայնածաւալ քարոզչութիւն կատարել՝ արաբական, իսլամական, եւրոպական, ամերիկեան, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական շրջանակներէն ներս, համապատասխան մօտեցումներով եւ շեշտաւորումներով:

- Հայրապետական մեր վերջին պատգամը ուղղուած է ԱՐՅԱՆՍԻ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆ: Սիրելի՛ Արցախի հայութիւն, Արցախը պարտուած չէ, յաղթական է Արցախը ու պիտի մնայ յաղթական՝ այնքան ատեն, որ ձեր կեանքը շահախնայած է ամուր հաւատքով, կռանուած՝ անխորտակելի կամքով ու թրծուած՝ պայծառ ապագայի տեսլականով: Դուք առանձին չէք, Արցախի հայութիւն. ողջ հայութիւնը ձեզի հետ է. իւրաքանչիւր հայ, ուր որ ալ գտնուի, արցախցի է, բառին ամբողջական իմաստով: Իր պատմութեան դաժան պայմաններուն մէջ գոյատեւած եւ իր հայրենի հողը նահատակներու արինով, սուրբերու արօթքով, հոգեմտաւոր ստեղծագործութեամբ եւ հայկական անաղութիւններով, ապրումներով ու արժէքներով սրբագործած Արցախը պիտի մնայ հայկական, ինչ ալ ըլլան զինք շրջապատող տագնապները: Ժողովուրդ մը կը կորսուի պատմութեան փոշիին տակ, երբ կը նահանջէ տագնապներուն դիմաց, երբ կը կորսնցնէ իր վճռակամութիւնը իր իրաւունքներուն նկատմամբ: Արցախը, իր ժողովուրդով, իր իշխանութեամբ ու իր բնակով, փաստած է, որ կը մնայ ամբօրէն կառչած իր արդար իրաւունքներուն:

Արցախի ժողովուրդը խորհրդարանին ճամբով արտայայտած է իր հաւաքական կամքը՝ «ճանաչում մտնուի փրկութեան»: Արդար պահանջք մը, որ իրաւական հիմք ունի եւ կը համապատասխանէ պատմական իրողութեան ու միջազգային օրէնքին: Սա պահուն, Մենք եւս Մեր ձայնը միացնելով Արցախի խորհրդարանին, կը յայտարարենք, թէ «խորապէս համոզուած ենք, որ վերահաս ողբերգութիւնը կանխելու միակ միջոցը Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումն է՝ ՃԱՆՈՒՄ ՅԱՆՈՒՄ ՓԸՐԿՈՒԹԵԱՆ ՍԿԶՐԱՆՔԻ ՀԻՄՈՒՆ ՎՐԱՅ»: Արցախին դիմաց այլ ճանապարհ չկայ: Եկէ՛ք, ժողովուրդ հայոց, միասնաբար եւ արիաբար քայլեր առնէք: Բի՛ւր պատիւ ու յարգանք Արցախի մեր սիրելի ժողովուրդին:

Ս. Աստուածածին Վանք
Պիքֆայա, Լիբանան
12 Օգոստոս 2023

Առաջնորդութիւն
Բերիոյ Հայոց Թեմի

Ուսումնական
Խորհուրդ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2023 - 2024 տարեշրջանին համար

- Ազգային Մանկապարտեզը կարիքը ունի համալսարանաւարտ, մասնագետ ուսուցչուհիներու:
- Ազգային Միացեալ վարժարանը կարիքը ունի հետեւեալ նիւթերը դասաւանդող համալսարանաւարտ մասնագետներու.
- Անգլերէն,
- Արաբերէն,
- Ընկերային Գիտութիւն,
- Համակարգիչ:

Ինչպէս նաեւ հոգեբանական խորհրդատուի:

Մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 0932890929-0966463195:

ԶԱՐՄԻԿ ՊՕՂԻԿԵԱՆ. «ԱՅՍՕՐ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՏԻՊՆ Է»

Alpha News-ի ուղիղ սփռումին ընթացքին Արցախի ներկայ վիճակին շուրջ ընթացած զրոյցի ատեն «Գանձասար»-ի գլխավոր խմբագիր Զարմիկ Չիլմբոշեան-Պողիկեան ըսաւ, որ «հալէպահայութեան ընդ. կարծիքին համաձայն, Արցախի ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութիւնը էական է»:



«Մեզի համար շատ կարեւոր է Արցախի ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութիւնը, որովհետեւ ապրելով իր պատմական բնօրրանին մէջ՝ Արցախի ժողովուրդը պէտք է իրաւունք ունենայ նուազագոյն կենսական պայմաններով ապրելու, իրաւունք ունենայ մայր Զայաստանին հետ կապ ունենալու», ըսաւ ան:

Պողիկեանի համոզմամբ՝ Արցախը այսօր Ատրպէյճանի կողմէ կ'ենթարկուի ոչ միայն քաղաքական ճնշումի, այլ նաեւ ցեղասպանութեան:

«Արցախը այսօր կ'ենթարկուի Ատրպէյճանի կողմէ բռնութեան, որ ոչ թէ պարզապէս քաղաքական ճնշում է, այլ ուղղակի մարդոց կեանքին կը սպառնայ, ցեղասպանութեան նախատիպն է այն, ինչ որ այսօր կը կատարուի Արցախի մէջ», արձանագրեց սուրիահայ համայնքի ներկայացուցիչը:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՄԻՇՏ ԿԱՆԳՆԱԾ Է ԱՐՑԱԽԻ ԿՈՂՔԻՆ

Նուրբ է իրավիճակը, եւ դժուար է ըսել, թէ վաղը ինչ որոշում կը գոյանայ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի նիստին: Այս մասին Alpha News-ի ուղիղ սփռումով ըսաւ Լիբանանի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարեան՝ մեկնաբանելով, թէ ինչ ակնկալիքներ ունին գերտերութիւններէն:

«Նուրբ է իրավիճակը, եւ դժուար է ըսել, թէ վաղը ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը ինչ որոշում կը գոյացնէ, քանի որ Ատրպէյճանի աշխուժօրէն կ'աշխատի: Յուսանք, որ բացի յայտարարութիւններէն ՄԱԿ-ի ԱԽ-ը իր լիազօրութիւններու շրջագիծէն ներս կը գործէ եւ կը ստիպէ, որ Արդարադատութեան Միջազգային Դատարանի որոշումները իրականացուին: Այնուամենայնիւ, պէտք է աշխուժօրէն աշխատիլ, բազմակողմ դիւանագիտութեամբ աշխատիլ, որ ՄԱԿ-ը եւս կանխարգիլէ Պաքուի կիրառած ցեղասպանական քաղաքականութիւնը», յայտնեց Գանտահարեան:



«Նուրբ է իրավիճակը, եւ դժուար է ըսել, թէ վաղը ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը ինչ որոշում կը գոյացնէ, քանի որ Ատրպէյճանի աշխուժօրէն կ'աշխատի: Յուսանք, որ բացի յայտարարութիւններէն ՄԱԿ-ի ԱԽ-ը իր լիազօրութիւններու շրջագիծէն ներս կը գործէ եւ կը ստիպէ, որ Արդարադատութեան Միջազգային Դատարանի որոշումները իրականացուին: Այնուամենայնիւ, պէտք է աշխուժօրէն աշխատիլ, բազմակողմ դիւանագիտութեամբ աշխատիլ, որ ՄԱԿ-ը եւս կանխարգիլէ Պաքուի կիրառած ցեղասպանական քաղաքականութիւնը», յայտնեց Գանտահարեան:

Ան ներկայացուց Է Նաեւ Լիբանանի Զայ Դատի Յանձնախումբին աշխատանքները:

«Զայ Դատի Յանձնախումբը լրջօրէն կ'աշխատի եւ կը փորձէ հակամարտութեան էութիւնը ներկայացնել, եւ թէ ինչ ցեղասպան գործողութիւններ կ'իրականացնէ Ատրպէյճան: Զայ Դատի Յանձնախումբի պատուիրակուիւնը բազմաթիւ դիւանագիտական ներկայացուցիչներու հետ հանդիպումներ կազմակերպած է, յուշագրեր ներկայացուցած: Այսօր լիբանանեան լրատուամիջոցները արձագանգեցին Զայ Դատի վերջին հաղորդագրութեան, ուր կը նշուի նշանաւոր ցեղասպանագետներու կարծիքը Արցախի մէջ տեղի ունեցող դէպքերուն վերաբերեալ ու շեշտը կը դրուի Ատրպէյճանի վարած ցեղասպանական քաղաքականութեան վրայ», անելցուց Գանտահարեան:

Ան ներկայացուց Է Նաեւ Լիբանանի Զայ Դատի Յանձնախումբին աշխատանքները: «Զայ Դատի Յանձնախումբը լրջօրէն կ'աշխատի եւ կը փորձէ հակամարտութեան էութիւնը ներկայացնել, եւ թէ ինչ ցեղասպան գործողութիւններ կ'իրականացնէ Ատրպէյճան: Զայ Դատի Յանձնախումբի պատուիրակուիւնը բազմաթիւ դիւանագիտական ներկայացուցիչներու հետ հանդիպումներ կազմակերպած է, յուշագրեր ներկայացուցած: Այսօր լիբանանեան լրատուամիջոցները արձագանգեցին Զայ Դատի վերջին հաղորդագրութեան, ուր կը նշուի նշանաւոր ցեղասպանագետներու կարծիքը Արցախի մէջ տեղի ունեցող դէպքերուն վերաբերեալ ու շեշտը կը դրուի Ատրպէյճանի վարած ցեղասպանական քաղաքականութեան վրայ», անելցուց Գանտահարեան:

Ան դիտել տուաւ, որ համայնքը մշտապէս կանգնած է Արցախի կողքին, իրադարձութիւնները միշտ ճշգրտօրէն ներկայացուցած, որպէսզի լիբանանեան հասարակութիւնը եւս ճիշտ ընկալէ իրավիճակը:

ՅՈՒՆԱՍԿԱՅԻՆՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԻ ՄԻՇՏ Է ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ. ԲՈՂՈՔԵԼՈՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԳԷՄ

Յունաստանի իրաւունքները եւս միացած է համայն հայութեան՝ բողոքելու Ատրպէյճանի ոտնձգութիւններուն եւ ցեղասպանական գործողութիւններուն դէմ: Այս մասին Alpha News-ի ուղիղ սփռումին ընթացքին ըսած է Յունաստանի «Ազատ Օր» թերթի գլխավոր խմբագիր Բերոբ Էբիգեան:



«Այս շարժումը նոր չէ, երբ Ատրպէյճան իրագործեց 44-օրեայ պատերազմը: Այդ պատերազմի բռնկումէն երկու-երեք օր վերջ յունաստանի իրաւունքները առաջին էր, որ ցոյց կազմակերպեց՝ բողոքելու Ատրպէյճանի սանձազերծած պատերազմին դէմ: Ապա ամէն առիթներով, Զայ Դատի յանձնախումբին նախաձեռնութեամբ, յունաստանի իրաւունքները բազմիցս իրապարակային ցոյցերով ու ելոյթներով ոտքի կանգնեցաւ, ցոյց տուաւ իր զօրակցութիւնը Զայաստանին ու Արցախի ժողովուրդին», անելցուց ան:

Բերոբ Էբիգեանի համաձայն, յունաստանի իրաւունքները նաեւ ցոյցեր կազմակերպած է Յունաստանի մէջ Զայաստանի դեսպանատան առջեւ՝ ի զօրակցութիւն Արցախի ու արցախահայութեան:

«Մենք նաեւ բողոքի զօրակցութեան հաւաք կազմակերպեցինք Աթէնքի հայկական դեսպանութեան առջեւ, ոչ թէ բողոքելու պետութեան դէմ, այլ զօրակցելու Արցախի ժողովուրդին: Սփիւռքի մէջ մենք կը նկատենք, որ 33 բոլոր դեսպանութիւնները մեր Արցախի դիւանագիտական ներկայացուցչութիւններն են: Մանաւանդ, երիտասարդներու ներկայութիւնը եւ ժողովուրդին պատրաստակամութիւնը շատ կարեւոր էր, որպէսզի զօրավիճակը ըլլանք մեր ժողովուրդին: Շատ ցցուն էր, զօրաւոր էր, այդպէս ալ կը շարունակենք», ըսաւ յունաստանի համայնքի ներկայացուցիչը:

«Անցեալ Ապրիլին յունաստանի պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէր յունաստանցի թեմակալ առաջնորդը, կուսակցական, ազգային, միութենական եւ ամէն տեսակի միութիւններու ներկայացուցիչներ, հանդիպումներ ունեցան Յունաստանի Ազգային ժողովի նախագահին հետ: Անոր յատուկ նամակ յանձնեցին, որուն մէջ կոչ ուղղած էին Յունաստանի պետութեան եւ Ազգային ժողովին, ինչպէս նաեւ կառավարութեան զօրավիճակ կանգնելու Արցախի ժողովուրդին», ըսաւ ան:

Ան շեշտեց, որ բողոքի այս դրսեւորումներուն հետ մեկտեղ, համայնքի պատասխանատուները նաեւ յատուկ քաղաքական հանդիպումներ կ'ունենան:


«Անցեալ Ապրիլին յունաստանի պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէր յունաստանցի թեմակալ առաջնորդը, կուսակցական, ազգային, միութենական եւ ամէն տեսակի միութիւններու ներկայացուցիչներ, հանդիպումներ ունեցան Յունաստանի Ազգային ժողովի նախագահին հետ: Անոր յատուկ նամակ յանձնեցին, որուն մէջ կոչ ուղղած էին Յունաստանի պետութեան եւ Ազգային ժողովին, ինչպէս նաեւ կառավարութեան զօրավիճակ կանգնելու Արցախի ժողովուրդին», ըսաւ ան:

Էբիգեան ընդգծեց, որ Յունաստանի Զայաստանի իւրայատուկ դաշնակիցն է ու իւրայատուկ կապեր կան այս երկու պետութիւններուն միջեւ արդէն 30 տարիէ ի վեր:

www.kantsasar.com

Թուրքիոյ նուրջ

ՊՐԱԿԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՐԱԺԱՐԱԾ ԵՆ ՉԵԽԻՈՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԵՋ ՔԵՄԱԼ ԱՐՁԱԹՈՒՔԻ ԱՐՁԱՆԸ ՏԵՂԱԿՐԵԼԷ



Պրակի իշխանութիւնները մերժած են թրքական կողմին խնդրանքը Չեխիոյ մայրաքաղաքին մէջ տեղադրել Քեմալ Աթաթուրքի արձանը: Այս մասին յայտնած է Եւրոպայի մէջ լոյս տեսնող «Օրեր» պարբերականը՝ վկայակոչելով պաշտօնական որոշումը:

Կը յիշուի, որ Նախապետ Չեխիոյ հայ համայնքը Նամակով դիմած էր Պրակի իշխանութիւններուն՝ կոչ ուղղելով «հրաժարիլ հայերու՝ յոյներու ցեղասպանութեան համար մեղադրուող մարդու արձանը կանգնեցնելու մտադրութենէն»:

ԹՈՒՐԻԱՆ ԷՐՏՈՂԱՆ-ՓՈՒԹԻՆ ՀԱԽԱՎԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԱՇԽՈՒՄԱՅՈՒՅԱԾ Է ՈՒՔՐԱՆԻՈՅ ԵՒ ԱՐԵՄՈՒՏԵՒ ՀԵՏ ՀԱՂՈՐԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Թուրքիան աշխուժացուցած է Թուրքիոյ եւ Ռուսիոյ Նախագահներ Ռեճեփ Թայիպ Էրտողանի եւ Վլատիմիր Փութինի հաւանական հանդիպումի Նախաշեմին հացահատիկի գործարքի գծով Ուքրանիոյ, Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան հետ հաղորդակցութիւնները: Այս մասին ԹԱՍՍ լրատու գործակալութեան յայտնած է դիւանագիտական աղբիւր մը:



«Թուրքիան աշխուժացուցած է Ուքրանիոյ, Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան հետ հացահատիկի գործարքին վերաբերեալ բազմակողմ դիւանագիտական աշխատանքը: Աշխատանք կը տարուի արտաքին գործոց, պաշտպանութեան եւ առեւտուրի նախարարութիւններուն միջոցով:

«Էրտողանի եւ Փութինի բանակցութիւններու նախօրեակին աշխուժացած է հացահատիկի նախաձեռնութեան իրականացման խոչընդոտող խնդիրներու վերացման աշխատանքը», ընդգծած է գրուցակիցը:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԵԱԳՈՒՊԻԷԻ Ս. ԱՆՆԱՅԻ ՈՒԲՏԻ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՆԷՔ

ՆԱՂԻՄԵՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՄԱԿԱՐ ՍՐԲ. ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԵԱԳՈՒՊԻԷԻ ՆԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Կիրակի, 20 Օգոստոս 2023-ին
առաւօտեան ժամը 10:00-ին
Սրբ. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցոյ մէջ
Աւարտին տեղի պիտի ունենայ մատաղօրիներ:

Ծանօթ. - Երթելու ժամանակը ապահովուած է եկեղեցոյ
Թաղականութեան կողմէ առաւօտեան ժամը 9:00-ին, հետեւեալ
կեդրոններուն դիմաց.

Ս. Երրորդութիւն Եկեղեցի (Չուարթնոց) - Կրթասիրաց վարժարան -
Ս. Խաչ Եկեղեցի - Ճորճ Լահուտ - Կարտը Պաղտատ:

ՆԱԽԱԳԱԶ ԱՍՍ...

Սկիզբ՝ էջ 1

փելու, եթէ ենթարկուէինք Սուրիոյ պարտադրուած տարբեր պահանջներուն, յատկապէս եթէ մեր իրաւունքները եւ շահերը գիշէինք, սակայն մենք այդ ուղղութեամբ չգացինք, իսկ եթէ գացած ըլլայինք, հաւանաբար պատերազմէն խուսափէինք, սակայն ապագային այդ քայլին համար շատ մեծ տուրք պիտի վճարէինք:

Նախքան պատերազմը չէինք պատկերացներ, որ այս աստիճան ահաւոր քանդումի պիտի ենթարկուի երկիրը, որովհետեւ տեղեակ չէինք հիւսուած դաւեն, Նախատեսուած քանդումի ծրագիրէն: Գիտէինք, որ Սուրիոյ համար ծրագիրներ կան եւ կը հասկնայինք, որ երկար պատերազմ մը կը սպասէ մեզի, սակայն նման մանրամասնութիւններ չէինք ակնկալել:

-Սուրիոյ պետութիւնը ահաբեկչութեան դէմ պատերազմ կը մղէր, մինչդէռ յարձակողները երկիրը կը քանդէին: Չկայ պետութիւն մը, նոյնիսկ «ճախող», որ իր հայրենիքը կը քանդէ: Քանդող ահաբեկչութիւնն էր, իսկ իշխանութեան պարտականութիւնը, սահմանադրութեան եւ օրենքին համաձայն, երկիրը պաշտպանելն է:

-Ահաբեկչութեան դէմ պայքարն է որ երկիրը քանդէ, եթէ չպայքարէինք պետութիւնը պիտի վերականգնէ՞ր, անշուշտ այս տրամաբանական պիտի չըլլար: Երկրի քանդումի պատասխանատուութիւնը ահաբեկչներուն գորակող կանգնողները կը կրեն, ո՛չ թէ ահաբեկչութեան դէմ պայքարողները: Պատասխանատուութիւնը կրողը պատերազմը բռնկեցնողն է, պատերազմը ծրագրողն է եւ յարձակողն է, ո՛չ թէ պատերազմին դէմ պայքարողը:

-Մեր բարեկամ երկիրներուն գորակցութիւնը դրական դեր ունէր Սուրիոյ պայքարին եւ կայունութեան մէջ, սակայն անոնք չեն կրնար մեր փոխարէն պատերազմ մղել կամ պայքարիլ, որովհետեւ իսկական պայքարը մեր ժողովուրդին պայքարն է:

-Սուրիոյ Արաբական Լիկա վերադարձը ձեւական պիտի ըլլայ թէ ոչ, կախում ունի միջարաբական յարաբերութիւններու բնոյթէն եւ այդ յարաբերութիւններու զարգացումէն: Չեմ կարծեր, որ արմատական փոփոխութեան ենթարկուած են մեր յարաբերութիւնները: Արաբական երկիրները քաջ գիտեն մեր բոլորին սպառնացող վտանգները, սակայն տակաւին անոնք լուծում գտնելու փուլին չեն հասած մեր յարաբերութիւնները, եւ այնքան ատեն որ հարցերուն լուծումներ չկան, յարաբերութիւնները ձեւական կը մնան:

-Նախորդ տարիներուն Սուրիա վերադարձան շուրջ կէս միլիոն տեղահանուածներ: Անոնցմէ ոչ ոք բանտարկուեցաւ: Այսօր ինչո՞ւ դադարած է անոնց վերադարձը: Դադարած է կենցաղային վատ պայմաններուն հետեւանքով: Անոնք ինչպէ՞ս պիտի վերադառնան, երբ շուրի, ելեկտրականութեան, կրթութեան եւ նոյնիսկ առողջապահական ոլորտներուն մէջ տագնապ կայ: Անոնց վերադարձին գլխաւոր խոչընդոտը ահաբեկչութեան հետեւանքով երկրի քանդումն է ենթակառոցներն են: Այս կը հաստատէ տեղահանուածներու մեծամասնութիւնը, որուն հետ կապ կը պահենք: Տեղահանուածները վերադառնալու բուն փափաք ունին, սակայն մտահոգ են, թէ ինչպէ՞ս պիտի ապրին:

-Ուաշինկթընի հետ մեր երկխօսութիւնը վաղուց սկսած էր, սակայն ոչ շարունակական կերպով: Յոյս չունինք, որ ամերիկացին նոյնիսկ մէկ վայրկեանուան համար կը փոխուի, որովհետեւ ան միայն կը պահանջէ եւ կ'առնէ առանց տալու: Այս է ամերիկացիներուն հետ մեր յարաբերութեան բնոյթը 1974-էն ի վեր եւ մենք յոյս չունինք, որ մեր յարաբերութիւնը կրնայ այս պայմաններով բարեփոխուիլ: Այդուհանդերձ, Սուրիոյ արտաքին քաղաքականութիւնը չի թոյլատրեր փակել դռները:

-Ի՞նչ կը նշանակէ Թուրքիոյ Նախագահին հետ առանց Նախապայմաններու հանդիպիլ: Էրտողանի հետ առանց օրակարգի եւ առանց Նախապատրաստութեան ինչո՞ւ պիտի հանդիպիմ, գովացուցի՞չ խմելու: Մենք կ'ուզենք յստակ Նախատակի հասնիլ, այդ ալ թրքական ուժերուն սուրիական հողերէն քաշուիլն է, իսկ Էրտողանի Նախատակն է թրքական ուժերուն ներկայութեան օրինականացումը: Նման հանդիպում չի կրնար իրականաւալ Էրտողանի պայմաններով:

-Ռուսիոյ եւ Իրանի հետ մեր յարաբերութիւնը փաստեց, որ Սուրիան բարեկամներու ճիշդ ընտրութիւն կատարած է, իսկ Թուրքիոյ հետ մեր յարաբերութեան պարագային անելցնեմ, որ թէեւ Թուրքիան դրացի երկիր է, եւ բնական է, որ փափաք ըլլայ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բարելաւման: Ապագային, թրքական ուժերուն սուրիական հողերէն դուրս գալէն ետք, եթէ պայմանները փոխուին, բնական է, որ վերադառնանք նոյն քաղաքականութեան եւ դրական յարաբերութիւններ մշակենք դրացի երկիրներու հետ: Այս մօտեցումները մեզի համար սկզբունքներ են, ոչ թէ ժամանակաւոր քաղաքականութիւն:

-Անկասկած, որ «Կայսեր օրէնքը» խոչընդոտ է տնտեսութեան բարելաւման, սակայն տարբեր միջոցներով յաջողեցանք շրջանցել այս օրէնքը: Կրնամ ըսել որ այս օրէնքը ամենամեծ խոչընդոտը չէ, ամենամեծը՝ ահաբեկչներուն կողմէ երկրի ենթակառոցներուն քանդումն է:

Երկրորդ խոչընդոտը Սուրիոյ յետպատերազմեան պատկերն է, որ արգելք կը հանդիսանայ ներդրողներու Սուրիա ուղղուելուն եւ սուրիական շուկայի մէջ ներգրաւուելուն: Երրորդ խոչընդոտը ժամանակն է: Տնտեսութեան վերականգնումը երկար տարիներու կը կարօտի»:

Պրիմալեյտ

ՏԱՐԱԶ ԵՒ ԶԱՐԴ



Մարուշ Երամեան

Անոնք որոնք քանի մը տարի առաջ Երեւանի Վերնիսաժը կ'այցելէին, հաւանաբար հանդիպած ըլլալու են միջին տարիքի ամբողջովին հայկական տարագրով հանդերձաւորուած տիկնոջ մը, որ հակառակ Երեւանի շատ տաք օդին, կը մնար վրայէ վրայ հագած իր տարագին բաղադրիչներով:

Այդ տիկնոջ գեղանկարչուհի Լուսիկ Ագուլեցին էր, որ աւելի իրազակաւոր դարձեր էր հայկական տարագի իր մեծ հաւաքածոյով, որուն կենդանի ներկայացուցիչն էր ինք:

Լուսիկ (Յարութիւնեան) Ագուլեցին ծնած է 1946-ին, Նախիջեւանի Ագուլիս քաղաքը: 1953-ին ընտանիքով տեղափոխուած է Երեւան:

Իր տունը, որ Սասունցի Դաւիթ կայարանին մերձակայքը կը գտնուէր, ա'լ չէր բաւեր պարփակելու իր օր ըստ օրէ աւելցող եւ բարգաւաճող հաւաքածոն՝ հայկական տարագի բոլոր բաղադրիչները՝ գոգնոց, բաճկոն, շապիկ եւ այլն, գլխարկներ, արծաթեայ եւ մետաքսեայ գօտիներ եւ մեծ քանակութեամբ արծաթեայ զարդեր:

Սակայն Լուսիկ Ագուլեցին մահացաւ 2018 թուականին եւ իր բացակայութիւնը Վերնիսաժէն տաքուկ գոյն մը գողցաւ կարծեք:



Երեւանի մէջ կային քանի մը երիտասարդ տիկնիկներ, որոնք հայկական ազգային տարագին տարրերով կնոջական նորօրեայ հագուստներու ձեւաւորումներ կ'ընէին եւ կ'իրագործէին: Վստահ չեմ թէ անոնք կը շարունակէն իրենց շատ ինքնուրոյն աշխատանքը:

Երբ Մոնրեալ գացի եւ տեսայ ծայրայեղ հրեաները (հասիտիք) մի'շտ իրենց անանդական տարագրով, հասկցայ թէ ինչո՞ւ արաբները եւս յամառօրէն կը շարունակեն ստիպել իրենց կիները, որ լաչակ կրեն: Ի վերջոյ «անանդական» է ատիկա իրենց կրօնքին համար, թէեւ իսլամութեան սկիզբի շրջանին պարտադիր չէր, նոյնիսկ սովորութիւն չէր լաչակ կրելը:

Ինչո՞ւ կարգ մը խմբաւորումներ կը շարունակէն իրենց անանդական տարագրով ապրիլ, մինչ ուրիշներ արդէն վարդուց անցած են եւրոպականագետներուն, որոնք նուազ են իրենց քանակով ու բարդութեամբ եւ շատ աւելի գործնական են կրելու թէ մաքրելու տեսակետներէն:

Տարագները, սակայն, իրենց մէջ կը խտացնեն ազգի մը յատկութիւնները եւ արագօրէն կը դրոշմեն գաւնոնք մարդոց վրայ:



Մեզի, հայերուս համար ազգային տարագը վաղուց մոռցուած է, կը յիշենք միայն, երբ հայկական պարի ելոյթ մը կը դիտենք. իսկ անոնք որոնք հետաքրքրուած են, կըրնան ուղղուիլ ոչ այնքան մեծ թիւով գիրքերուն, որոնք կը խօսին հայկական տարագին մասին:

Առաջին հեղինակը, որ անդրադարձեր է հայկական տարագին, Մխիթարեան վարդապետ Զայր Դուկաս Ինճիճեանն է, որմէ ետք նոյն միաբանութեան անդամներէն Զայր Վարդան Զացունին ամբողջ գիրք մը յատկացուցեր է այդ կիւթին՝ «Պատմութիւն Զին Զայ Տարագին» խորագիրով: Այս հատորին մէջ հեղինակը մանրամասնօրէն եւ սպառնիչ կերպով կ'անդրադառնայ հայկական հին տարագներուն՝ սկիզբէն մինչեւ 17-րդ դարը ներառեալ, ման-

խանցներու նկարներ, հայկական մանրանկարչութենէն, լուսանկարներ եւ այլ աղբիւրներ:

Առաջել Նշան Պատրիկ Պատրիարքեան ծնած է 1894-ին, Սեբաստիա, ապրած է Եգիպտոս եւ մահացած 1984-ին, Երեւան: Եղած է նկարիչ, գրող եւ ազգագրագետ:

Առաջել Պատրիկ ըլլալով Զոմ եւ Փարիզ ուսանած նկարիչ, հեշտութեամբ նկարած է ամբողջ գիրքին տարագները, իւրաքանչիւր բաղադրիչը առանձին, անոնց անունները յիշելով: Այդ անունները երբեմն եղած են նաեւ թըրքերէն կամ պարսկերէն, ըստ վայրի:

Եղած են այլ հեղինակներ եւս, որոնք առանձին գիրքերով կամ գիտական հանդէսներու մէջ լոյս տեսած յօդուածներով անդրադարձած են հայկական տարագին: Առանց այս հեղինակներուն, մեր մշակոյթին կարեւոր բաղադրիչներէն մէկը ի սպառ պիտի կորսուէր պատմութենէն:

Ճիշդ է որ այսօր ո'չ Զայաստանի, ոչ ալ Սփիւռքի տարածքին հայ-

նամեակին Զայաստանի մէջ գարգացաւ հայկական ոսկեայ, աւելի՛ արծաթեայ զարդերու արուեստը, ուր երկու ուղղութիւն նկատելի է՝ վերարտադրել հին զարդերը, գաւնոնք կրկնօրինակելով, կամ պատրաստել նոր ստեղծագործութիւններ, յաճախ ներշնչուելով հին մատեաններէ, մանրանկարչութենէ, նկարներէ կամ... յուշարձաններէ, ինչպէս է օրինակ Tevo's արծաթագործ-արուեստագետին Շուշիի Զանդաբերդի որմնագարդերէն ներշնչուած կախազարդը, կամ Մատենադարանի դրան թակը ներկայացնող կախազարդը: Պետք է խոստովանիլ, որ այս արուեստագետին բոլոր գործերը հայկականութիւն կը բուրեն եւ ներշնչուած են մեր յուշարձաններէն կամ մշակոյթէն: Այլ հետաքրքրական գործ մըն է Նարեկացիի Մատեանէն առնուած Բան ԽԱ աշխատանքը (պատի համար): Իսկ նշածել արծաթեայ պանակը, որուն մէջ ծիրանի կուտ մը պահուած է, պարզապէս շատ... ազդեցիկ է:



Թելու Յովհաննիսեան 37 տարեկան արուեստագետ մըն է, որուն առաջին մասնագիտութիւնը դերասանութիւնն է: 2017 թուականին սկսեր է արծաթագործութեամբ զբաղիլ: Իր աշխատանքները ի յայտ կը բերեն իր տարիքին հետ խոստոր համեմատող խորունկ հասկացութիւն ազգային արուեստին եւ գեղագիտական շատ ուրոյն արտայայտութիւն:

Շատեր արծաթեայ զարդեր կը կրեն ամենօրեայ դրութեամբ. եթէ մտածենք թէ այդ «շատերը» կ'ապրին Սփիւռքի տարածքին տարբեր երկիրներուն մէջ, կը հասկնանք թէ ձեռով մը այդ զարդերը մեր մշակոյթին դեսպանները կը դառնան:


Զետեւաբար տարագային մշակոյթը ամօրեային մէջ բերելու եւ պահելու համար այսօր կարելի է գոհանալ հայկական զարդերով նաեւ ու միայն թերեւս:

Սակայն եթէ կարելի ըլլայ իմանալ, թէ ո՞ր շրջանի զարդ է, եւ թէ գլխազարդ է թէ կախազարդ, շատ աւելի հաստատուն կ'ըլլայ մեր «առաքելութիւնը»:



րակրկիտ ուսումնասիրութեամբ, ինչ որ գիրքին գիտական արժէք կը շնորհէ:

Խորապէս ուշագրաւ է Առաջել Պատրիկի կազմած տարագի քարտեզը, որ մինչեւ հիմա միակն է հաւանաբար: Իսկ գիրքը, որուն մէջ առաջին անգամ երեւցած է այդ քարտեզը, կը պարփակէ «Պատմական Զամառու Ակնարկ» մը աւելի քան տասը էջերու վրայ երկարող, իսկ գիրքին մնացեալ մասը գծանկարներ են հայկական տարագի, առնուած ժայռապատկերներէ (առաջին՝ ուրարտական շրջանին համար), դրամներէ (մանաւանդ գըլ-




կական տարագ հագնող կայ, - միակը Լուսիկ Ագուլեցին էր, - սակայն զարդերը այլ պատմութիւն են: Մասնաւորաբար վերջին տաս-

ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԿԱՆԱՐԴԱՆՔԸ (Յեղիանակ՝ Մարգալետ Մարկոսեան)

Արմենակ Եղիայեան

Եռագրութեան այս երրորդ եւ վերջին հատորը իր որակով կը յիշեցնէ Կանայի հարսանիքի գինին.



այստեղ հեղինակը յուզող բազմաթիւ հարցեր կ'արժեքէր կը յանգին իրենց աւարտին՝ իւրաքանչիւրը ստանալով իր լուծումը: Դրուած հարցերուն լուծում առաջարկելու գեղեցիկ սովորութիւնը արգասիքն է Մարգալետ Մարկոսեանի պայծառ ու որոնող մտքին, որ յատուկ էր իրեն վաղ երիտասարդութեան օրերէն, իսկ ժամանակը աւելի սրած ու ազնուացուցած է գայն:

Իսկ այդ հարցերը...

Անոնք կ'ընդգրկեն ինչպէս մասնաւորաբար Սփիւռքի, այնպէս ալ Հայաստանի լինելութեան սպառնացող բոլոր տագնապները՝ իրենց ամենանուրբ ծալքերուն մէջ, որ ան կը յաջողի ձեռնհասօրէն լուսարձակի տակ առնել ու անցընել գաւառը իր մտքի լուսաւոր պրիսմայէն:

Ընթերցողը չգրկելու համար գանոնք անձնապէս պէտքի ու անոնց ծանօթանալու արդար իրաւունքէն ու վայելքէն՝ կ'անդրադառնանք մէկ քանիին միայն՝ նախաճաշակ մը տալու համար:

* * *

Անոր մեծագոյն տագնապներէն մէկը յամեցող Սփիւռքն է, որ հայրենի ժողովուրդին հետ մէկ ամբողջութիւն կազմելու հեռանկարը չունի, քանի «*հոս (իմա՝ Լոս Անճելըս-Աէ) տիեզերական մարդն է, որ կը կոչուի, կը դարձնուի՝ մէկդի թողած ազգային կամ ցեղային ամէն պատկանելիութիւն... եւ մեր ինքնութիւնը մեր աչքերուն առջեւ մեզմէ կը հեռանայ, եւ ամէն օր քիչ մը, քիչ մը ամէն բոլոր կը հեռանանք ու կը փորձենք մոռնալ այդ հեռացումը*»: Այդ տիեզերական մարդը, այս պարագային՝ հայը, ամէն տեղ իր դիմագիծը կորսնցնողի դիրքին մէջ է, յատկապէս սկսած այն օրէն, ուր տեսնուեցաւ, որ Հայաստանի անկախացումը չյառաջացուց ակընկալուած բարեշրջումը, լուծում չբերաւ Սփիւռքի ճնշող իրողութեան. «*Ատենին Հայաստանն էր սփիւռքի հիւսիսաստղը, որուն կը ձգտէինք հասնիլ բոլորս... Հայաստանը անկախ է այլեւս, բայց ահռելիօրէն անակնկալ կացութեան մը մէջ յայտնուած*»:

Այդ «*ահռելի անակնկալը*» ոչ միայն օրին երագուած գանգուածային, թէկուզ մասնակի, հայրենադարձութեան չկայացումն է, այլ ճիշդ հակառակը՝ հայրենի ժողովուրդի գրեթէ գանգուածային սփիւռքացումը, որուն գարմանալի գուգադիպութեամբ մը կու գայ աւելնալու միջինարեւելեան գաղութներու հայութեան գաղթը, երկու պարագաներուն ալ մասնաւորաբար դէպի Միացեալ Նահանգներ, ուր «*կը դարձնուի տիեզերական մարդը՝ մէկդի թողած ազգային ու ցեղային ամէն պատկանելիութիւն*»:

Լուծումը... անյետաձգելի, անմիջական, թէկուզ ժամանակաւոր՝ հանդարտօրէն կերտելու մէկ հայրենիքի, մէկ ժողովուրդի ու մէկ եկեղեցիի տեսլականը, սկսելով՝ Առաջնահերթը մտրոպեան ուղղագրութեան հաստատումն է. «*Հիմնական թերացում մը պիտի ըլլայ, եթէ այդ էական սրբագրութիւնը տեղի չունենայ*»:

Ան շատ մեծ կարեւորութիւն կու տայ ուղղագրութեան հարցին, քանի արեւելահայ գաղթականները կը մերժեն իրենց գաւակները յանձ-

նել արեւմտահայ դպրոցներու, ուր «*սխալ ուղղագրութիւն*» կը սորվեցնեն, եւ այս՝ նախընտրելով օտար, իմա՝ ամերիկեան պետական դրպրոց դնել իրենց գաւակները, այլ խօսքով՝ բոլորովին գրկել գանոնը հայերէն սորվելէ, մինչդէռ «*հայերէն լեզուն պէտք է համապարփակ ուսուցողի ի հեճուկս գանգատներուն, որովհետեւ առանց հայերէն լեզուի՝ ոչ հայ ժողովուրդ է ոչ ալ հայ դպրոց կ'ունենանք*»:

Իսկ յաջորդը՝ «*ժամանակն է մտածելու նաեւ լեզուական միութեան մասին*», որովհետեւ նոյն արեւելահայը կը մերժէ նաեւ... արեւմտահայերէնը:

Եւ վերջապէս՝ «*Յիշուած գոյգ կետերէն կը հետեւի նաեւ միածոյ կրթական ծրագրի մը կարեւորութիւնը... Հայ աշակերտը ուր ալ գտնուի, պիտի սորվի նոյն լեզուն, նոյն պատմութիւնը եւ նոյն գրականութիւնը*»:

Այս ծանրակշիռ, կրօն, այլեւ յաւակնոտ առաջարկը, որ ոչ ոք համարձակած է բերել մինչեւ այդ, կը միտի ոչ այնքան լուծելու Ամերիկա ու արեւմտեան երկիրներ հաստատուած ու հետզհետէ աւելի աճող արեւելահայ գաղութներու հարցերը, որքան... արեւմտահայութեան եւ արեւմտահայերէնի, «*որովհետեւ հասած ենք ժամանակի մը, ուր արեւմտահայերէնը պիտի չկարենայ տոկալ, որովհետեւ գայն գործածողներուն թիւը գգալիօրէն կը նուազի օրէ-օր, եւ մեր վարժարաններէն ելած սերունդները ի վիճակի չեն եղած գայն անադարտ պահելու, առաւել եւս պետական լեզուն արեւելահայերէնն է*»: Բացայայտ է Մարգալետի թեքումը՝ ի նպաստ միասնական արեւելահայերէնի մը, մասնաւորապէս Սփիւռքի մէջ հետզհետէ պիտի անհետանան արեւմտահայերէն գիտցող ուսուցիչներ, «*մինչդէռ արեւելահայ ուսուցիչներ միշտ ալ կարելի է ստանալ Հայաստանէն*»:

Աւելի անդին, վերադառնալով նոյն հարցին, ան նկատել կու տայ, որ կարելի չէ ակնկալել, որ հայրենի պետութիւնը ինք պահպանէ արեւմտահայերէնի միասնական լեզուի կոչումը, կ'եզրակացնէ. «*Կը մնայ մաղթել, որ նոյն այդ գանգուածը, եթէ պիտի պահէ հայերէնը, ապա դարձուր մշակողին ու ինքնութեան հետ արեւելահայերէնով պահէ իր կապերը, վերջին հաշուով... Զանաթային չի գար այդ լեզուն եւ առհաւական այն խռովքը, որ կ'առնենք արեւելահայ լեզունով՝ նոյնն է ինչ որ արեւմտահայերէնը կու տայ մեզի... Մեծ եղեռնի վերջին գոհը, ուզենք կամ չուզենք, պիտի ըլլայ մեր ժողովուրդի գերագանցօրէն փառահեղ հրաշքը եւ իր ստեղծագործ հանճարին անխմանալիօրէն լուսացնող հրաշքը, որ կը կոչուի արեւմտահայերէն լեզու*»:

Որքան ես գիտեմ, ապա ոչ ոք Սփիւռքի մէջ երբեքից համարձակած է այսքան պայծառատեւութեամբ նման տեսակէտ յայտնել՝ այս յստակութեամբ ու քաջութեամբ եւ առանց ծամծամելու բառերը:

* * *

Հայ-թուրք, ընդհուպ հայ-թուրք-ազերի հաշտութիւնը կը կազմէ հեղինակին նախասիրած մէկ շատ հետաքրքրական բնաբանը:

Առ այս՝ պատմական յետադարձ ակնարկէ մը ետք ան կ'ուրուագծէ նման հեռանկարի մը տարբերը, որոնք կը հիմնուին նախապայմաններու վրայ. «*Երբ Յեղասպանութեան ճանաչումը տեղի կ'ունենայ արդար հատուցումով, ոչ մէկ դժուարութիւն կ'ունենանք վերահաստատելու այն բարեկամութիւնն ու դրացնութիւնը, որոնք գոյութիւն ունենին նախքան Իթիհակականները եւ Սուլթան Համիտը*»:

Ըստ այսմ՝ պատմական սրբագրութիւնը պէտք է սկսի ինքը՝ թուրք պետութիւնը. «*Եթէ Զեմալ 85 տարի առաջ «գոհեց» Ատրպէյճանը՝ ժամանակն է, որ թուրք պետութիւնը... սրբագ-*

րէ սխալը եւ վարձահատոյց ըլլայ՝ վերադարձնելով Կարսի ու Արտահանի նահանգները իրենց իրաւատիրոջ՝ Հայաստանին, եւ Հայաստանը իր կարգին կը փոխադարձէ վեհանձնութիւնը... Ատրպէյճանին կը տրուի տարանցիկ ճամբայ Հայաստանէն դէպի Թուրքիա, բայց նախքան այդ արտօնութիւնը՝ թուրք պետութիւնը պէտք է Հայաստանին շնորհէ տարանցումի ազատ ուղի Գիւմրիէն դէպի Տրապիզոն եւ Կարսէն դէպի Ատանա, 5-10 քիլոմէթր լայնութեամբ եւ Հայաստանի գերիշխանութեան ներքեւ եւ այդ գոյգ քաղաքներու նաւահանգիստներուն մէջ Հայաստանի գերիշխանութեան տակ դրուած ազատ շուկայի քարտիւնը»:

«*Այս է, - կ'եզրակացնէ իր պայմանները, - լաւագոյն ձեւը Յեղասպանութեան ճանաչման եւ հատուցման, որով ետք որեւէ հարց գոյութիւն չ'ունենար Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանները բանալու*»:

Կը խուսափիմ աւելի առաջ երթալէ, որպէսզի ընթերցողը ինք պեղէ մնացեալները եւ ամբողջական ըլլայ անոր վայելքը:

1-Թելադրելով անոր, որ հրաժարի իր անկախութենէն եւ ենթարկուի Խորհրդային իշխանութեան, ինչ որ տեղի ունեցաւ եւ որուն հետեւանքով ու փոխարէն՝ Հայաստան կորսնցուց Կարսի եւ Արտահանի նահանգները:

2-Յօդուածը գրուած է 2005-ին, երբ տակաւին Արցախն ու ազատագրուած Եօթը շրջանները կը մնային հայոց իշխանութեան տակ. հեղինակը ասոնք վաստակեալ իրաւունք կը նկատէ եւ պատրաստ չէ որեւէ բան վերադարձնելու:

ԱՐՃԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ...

Սկիզբ՝ էջ 3

Ճէն ընդամենը երկու օր անց: Սա ոչ այլ ինչ է, քան Ատրպէյճանի կողմէն Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Արցախի Հանրապետութեան մէջ յառաջացած մարդասիրական աղետն միջազգային կառոյցներուն ու շաղկապները շեղելու փորձ:

Վերստին կը նշենք, որ 12 Դեկտեմբեր 2022-էն Արցախի Հանրապետութիւնը Ատրպէյճանի անօրինական գործողութիւններուն հետեւանքով յայտնուած է լիակատար շրջափակման մէջ: Աւելին, 15 Յունիս 2023-էն Արցախի ժողովուրդը գրկուած է Լաչինի միջանցքէն նոյնիսկ Կարմիր խաչի միջազգային կոմիտէի եւ Բոսնիոյ խաղաղապահ զօրակազմի միջոցով սննդամթերքի, դեղորայքի եւ կենսական նշանակութեան մնացած բոլոր ապրանքներու նուազագոյն քանակի ներկրումի կարելիութենէն:

Այսպիսով միջազգային հանրութեան կողմէն գործուն քայլերու բացակայութեան պայմաններուն Ատրպէյճան կը շարունակէ խախտել 9 Նոյեմբեր 2020-ի Եռակողմ յայտարարութեան դրոյթները, միջազգային համընդհանուր իրաւական ձեւաչափերը, ինչպէս նաեւ Լաչինի միջանցքի մասին ընդունուած որոշակի միջազգային իրաւական շարժումները, որոնցմէ են ՄԱԿ-ի արդարադատութեան միջազգային դատարանի եւ Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանի իրաւաբանօրէն պարտադիր որոշումները Լաչինի միջանցքի ապարգելափակման մասին:

Կը պահանջենք միջազգային բոլոր դերակատարներէն եւ, մասնաւորապէս, Բոսնիոյ խաղաղապահ զօրակազմէն անյապադօրէն ձեռնարկել համապատասխան քայլերու՝ զսպելու Ատրպէյճանի հաւանական սարսիչ գործողութիւնները:

Ստեղծուած իրավիճակին մէջ հրամայական կը համարենք հնարաւորինս հրատապ ՄԱԿ-ի Ազգային Խորհուրդի արտակարգ նիստի գումարումը՝ Լաչինի միջանցքի ամբողջական եւ անվերապահ ապարգելափակման ուղղուած անհրաժեշտ եւ արդիւնաւէտ միջոցներու իրականացման մասին որոշում կայացնելու նպատակով, ըսուած է յայտարարութեան մէջ:

ՎԵՐԱՄՈՒՏ



Գենոզ Դեսիկեան

Այս օրերուն դարձեալ դպրոցական վերամուտ է: Առաջին գանգ: Ուսումնական տարեշրջան:

Քանի մը ամիսներու վրայ համրուած արձակուրդէն ետք, հայ թէ օտար բոլոր վարժարանները կըրկին անգամ կը բանան իրենց դռները: Ծնողք, աշակերտ, ուսուցիչ, արդէն իսկ սկսած են մտնել դպրոցական տարեշրջանի մը հունին մէջ:



Այս բոլորը տեսանելի են: Վերամուտ է: Կարելի է ասել-ցնել՝ ուսման հրաւիրող կանչ: Ուսանողական կամ աշակերտական տարեշրջանի ներկայութիւնն է սկիզբ:

Պէտք է նաեւ յիշել, որ «վերամուտ» ըստածը, ըլլանք աշակերտ, ուսուցիչ, ուսանող կամ ծնողք, իւրաքանչիւրիս մօտ ժամանակաշրջան մըն է, իր բազմատեսակ հոգերով եւ մտատանջումներով ու յատկապէս այս օրերուն մանաւանդ ապրուստի սղութենէն ծնունդ առած՝ գանգան դժուարութիւններով:

Այս բոլորը նորութիւններ չեն: Արեւու նման՝ պայծառ: Կ'ապրինք քաղաքական, ընկերային եւ տնտեսական խառն ժամանակներու մէջ, որոնք բաւականին ծանր եւ բացասական անդրադարձներէն բոլորս ալ անմասն չենք կրնար մնալ:

Ու յաճախ մենք մեզի կը փորձենք մտածել, թէ իբրեւ սփիւռքահայեր, ինչպէ՞ս առանց հայ դպրոցի պիտի կարենայինք մեր ազգային ու մշակութային դարաւոր ինքնութիւնը պահելով գոյատեւել: Կարգ մը այլ անխուսափելի հարցերու կողքին, այս մէկն ալ նոյնն է իր գոյնով եւ տեսքով, եւ մեր բազմազան ըմբռումները լուրջ քննարկումի կ'ենթարկէ:

Սակայն անկախ նման մտածումներէն, իբրեւ հայեր, երբեք կասկած չունինք, որ մեր ինքնութիւնը մեր տուններէն ետք, կը շարունակուի նաեւ հայ վարժարաններէն ներս:

Լաւ պէտք է գիտնանք, որ հայ վարժարանը մեր ինքնութիւնը պահող ամրակուռ բերդն է: Եթէ կ'ուզե՞ք՝ հայ աշակերտին երկրորդ հարազատ տունը: Դո՛ւն է, որ ան կը սորվի իր լեզուն ու կը ծանօթանայ իր ազգի պատմութեան, իր ժողովուր-

դի դարերու մշակոյթին ու կը ներշնչուի անոնցմով: Դո՛ւն է, որ ան կը պատրաստուի իբրեւ գիտակից հայ, տիպար քաղաքացի եւ առաքինի մարդ:

Սփիւռքեան ճակատագրին մէջ ինկած ենք եւ կ'ապականի մեր շըրջապատը ու անհրաժեշտ է հայ մըտքի կոփումը, հայ տարածքներէ մեր տոհմիկ յատկանշներուն հետ միատեղ կենսունակ պահելու եւ մեր

դի գոյատեւման պայքարին ազգային իմաստ տալու եականութեան կողքին: Եւ ահա՛, հայ դպրոցը: Այս կ'ըսեմ, հաւատքով եւ նոյնքան ալ՝ յոյսով:

Միւս կողմէ սակայն ականատես ենք, որ արդէն ժամանակները փոխուած են: Նաեւ փոխուած են մեր տարածքային մտայնութիւնները, հետաքրքրութիւններն ու ճաշակները: Այս օրերուն մայրենի լեզու եւ կամ հայեցի դաստիարակութիւն ըստած հասկացողութիւնը այն չէ, ինչ որ եր ասել նոյնիսկ հինգ տարի առաջ:

Դիմա եւ ամէն տեղ տեսանելի է օտար լեզուին ներկայութիւնը մեր կրթական եւ մշակութային կեանքէն ներս: Ու առանց վարանելու կըրկանք ըսել նաեւ որ մեր առօրեայէն ներս ալ յաճախ պատկերը տխուր է իր ոչ փայլուն ըլլալուն պատճառով: Այս բոլորը հաստատ իրողութիւններ են, որոնք կը փորձենք կըրկին անգամ լոյսին եւ ճշմարտութեան բերել: Կրկնել: Ահագ անգել:

Միւս կողմէ պէտք է ընդունիլ նաեւ, որ շնորհիւ մեր ծնողներու գերազանց գոհողութեան եւ մանաւանդ իր ազգի ապագային նկատմամբ ունեցած մեծ բժանխնդրութեան, հայ վարժարաններէն ներս հայ աշակերտներու ներկայութիւնը մեզի կը պարգեւէ եւ սրտի հպարտութիւն, եւ գոհունակութիւն, եւ մեծ ուրախութիւն:

Որովհետեւ հայ ծնողները կը հաւատան, որ հայ դպրոցը պատմական կառոյց ալ է, նաեւ հայ ընտանիքը յիշեցնող համալիր մը: Անոնք, ամէն գոհողութիւն յանձն կ'առնեն ու հայկական վարժարան կը դրկեն, որպէսզի իրենց գաւակները մեծնան եւ նկարագիր կազմեն ազգային հարազատ միջավայրի մէջ:

Բայց նաեւ տխուր իրականութիւն է տեսնել, թէ այսօր բազմա-հազար հայ աշակերտներ հայկական վարժարաններու մէջ չեն, կամայ թէ ակամայ: Պատճառները բացայայտ են եւ յստակ: Անոնք բոլորն ալ գրկուած են հայ դպրոցի հարազատ ջերմութենէն, գուրգուրանքէն ու շունչէն, եւ կը խարխափեն օտար ու անապահով ուղիներու վրայ:

Դիմա եւ օտար վարժարան յաճախող աշակերտներու պարագաները երկու հակադիր եւ սակայն յստակ իրականութիւններ են, որոնցմէ վերջինը՝ մեզ մեծապէս կը տազնապեցնէ:

Եւ յանուն մեր գոյատեւման, պէտք է տազնապահը, որովհետեւ ամէն բանէ ասելի էական է, որ ոչ հայկական վարժարան յաճախող հայ աշակերտը չունենայ այն տպաւորութիւնը, թէ իր յաճախած օտար վարժարանէն ներս հայեցի դաստիարակութեան բացակայութիւնը, զինք պիտի հեռացնէ մեզ մէ, մեր միջավայրէն, իր հայու պատկանելիութենէն: Ուստի անտէր չձգենք ու զինք ներգրաւելու անմիջական միջոցներ որոնենք:

Աւելին, ուրիշ շատ մը կենսական «բաներէն» առաջ, նաեւ պէտք է հայ վարժարաններուն նիւթապէս առաւել զօրավիզ կանգնինք, որպէսզի անոնք դառնան անխտիր բոլոր հայ աշակերտներուն սիրելի եւ հարազատ տունը: Այլ խօսքով՝ այլեւս պարզ հանդիսատեսի մեր իրավիճակէն դուրս պէտք է ելլենք: Խօսքէն գործի անցնելու ժամանակը հասած է նոյնիսկ շատ մը տեղեր ան-

ցած ալ է: Այլապէս՝ պարտութեան կը մատնուինք ու ծուլումը կը յաղթանակէ:

Այս մտահոգութիւնը պարզ մարտահրաւեր մը ըլլալէ ասելի առաջնակարգ պարտականութիւն ու պատասխանատուութիւն պէտք է նկատենք, որոնք մեր ներկայ կեանքի իրականութիւններուն հետ ամբօրէն շաղախուած են:

Ու պատիւ իրենց, հայ վարժարանը կը շարունակէ ունենալ զինք քաջալերող ու իր առաքելութեան հաւատացող ու նեցուկ կանգնող ազգանուէր հայորդիներ, յայտնի ու անյայտ բարերարներ, որոնք իրենց սրտէն, հոգիէն ու քսակէն միշտ «բան» մը տուած են, եւ կը շարունակեն տալ մեր ժողովուրդին:

Տեղին է, որ յատուկ խօսք եւ գնահատանք ու երախտագիտութիւն յայտնենք մեր վարժարաններու բոլոր մեծ ու փոքր բարերարներուն, որոնք հայ ծնողներուն եւ բարեսիրական միութիւններուն ու նուիրատուներու կողքին, ամէն առիթով իրենց նիւթական անսակարկ աջակցութիւնը հայկական վարժարան կը դրկեն, եւ մեր վարժարաններու դժուարին կեանքը հեզասահ կը դարձնեն:

Իսկ հիմա, անկախ այս բոլորէն... յիշենք... կրկին վերամուտ է:

Ուրախ եւ հպարտ ենք, որ հայ աշակերտը կրկին անգամ կը վերադառնայ իր սիրելի եւ երկրորդ, եւ հարազատ տունը՝ հայ վարժարանը:

Արդ՝ առաջին գանգին առթիւ՝ բարի դարձ եւ բարի երթ:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- Դիմա Աւետարանական համայնքապատկան Նախակրթական եւ երկրորդական վարժարանները 2023-2024 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունին.
- Երկու եւ ասելի տարիներու վարչական հմտութիւն ունեցող տնօրէնի եւ տեսուչի,
- Դիմու եւ համալսարանական վկայագիր ունեցող ուսուցիչներու,
- Տնտես հայրիկի եւ մայրիկի:
- Փափաքողները կրնան դիմել Կրթական Խորհուրդի գործավարութեան գրասենեակ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլվաբոջեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաորոգ՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Վրաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվաբոջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամէնէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուի կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Ի վերջոյ ձեր արեւը պիտի շողայ եւ տրտմութիւնը փարատի: Բարեկամէ մը հեռաւոր Նուէր մը պիտի ստանաք:



Ցուլ

Ձեր բոլոր հարցերը պիտի լուծուին ձեր բացառիկ կարողութիւններուն շնորհիւ: Յարգանքի պիտի արժանանաք եւ հպարտանաք:



Երկուորեակ

Ծանրաբեռնուած շրջան մը պիտի անցընէք եւ ձեր դժուարին հարցերը պիտի լուծէք: Հիանալի շնորհներով օժտուած էք ու մարդոց գովասանքին պիտի արժանանաք:



Խեցգետին

Երկար ճամբորդութիւն մը ծրագրած էք կատարել: Աւելի խոհեմութեամբ մտածեցէ՛ք եւ շուտով որոշումներ մի՛ կայացնէք:



Առիծ

Ձեր բեռներէն պիտի ձերբազատուիք եւ հանգստանաք: Հաճելի հանդիպում մը պիտի ունենաք մանկութեան ընկերներուն հետ:



Կոյս

Ձեր բոլոր պարտաւորութիւնները լիովին պիտի կատարէք եւ հոգեկան բաւարարուածութիւն զգաք: Բարի լուր մը պիտի ստանաք եւ քաջալերուիք:



Կշիռք

Մեծ գոհողութիւններ կը կատարէք ձեր շուրջիներուն նկատմամբ: Մարդոց հիացումին պիտի արժանանաք եւ երջանիկ զգաք:



Կարիճ

Շաբաթը լի է հաճելի անակընկալներով: Ձեր սիրելիին կողմէ քաջալերական խօսքեր պիտի լսէք եւ ձեր նպատակները իրագործելու արտորաք:



Աղեղնաւոր

Ձեր առողջապահական խնդիրները մի՛ անտեսէք: Հաճելի վայրի մը մէջ ընթրիք մը պիտի կազմակերպէք եւ ձեր բարեկամներուն աջակցութիւնը վայելէք:



Այծեղջիւր

Մեծ յաջողութեան պիտի տիրանաք եւ հոգեկան խաղաղութիւն ստանաք: Հին ընկերներու հետ հաճելի հանդիպում մը պիտի ունենաք մտերմիկ վայրի մը մէջ:



Չրիս

Երկար սպասումէ ետք պիտի հանդիպիք ձեր սիրելիին եւ սեր խոստանաք անոր: Հոգեկան ճնշուածութենէ պիտի ձերբազատուիք եւ գուարճալի պահեր ունենաք:



Ձուկ

Միօրինակութենէ դուրս եկէ՛ք եւ Նոր գործի առաջարկը անվարան ընդունեցէ՛ք: Շաբաթը լի է հաճելի անակնկալներով, որոնք Նոր թափ պիտի տան ձեր հոգիին:



ԻՆՉՊԷՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵԼ ՄԱՆՈՒԿԸ ԴՊՐՈՅԻ

Ամառնային արձակուրդը կը մօտենայ իր ավարտին: Հետեւաբար ծնողներ կրնան նախապատրաստել իրենց զաւակները, յատկապէս՝ մանուկները, դպրոց յաճախելու, որպէսզի խուսափին դժուար կացութիւններէ, յատկապէս՝ վերամուտի առաջին օրերուն:

1. Մանկապարտեզ կամ այլ նախադպրոցական հաստատութիւն յաճախելը

Տարբեր երկիրներու մէջ տեղի ունեցած հետազօտութիւններ շատ յաճախ կը յայտնեն, որ մանկապարտեզ յաճախող մանուկներուն համար դպրոցական կեանք սկսիլը ավելի դիւրին կ'ըլլայ:



Մանկապարտեզ յաճախելով՝ մանուկը կը սորվի յարմարիւ նոր միջավայրին, իր տարեկիցներուն հետ շփումներով ձեռք կը բերէ ընկերային հմտութիւններ, ինչպէս նաեւ կը սորվի ծնողքէն բաժնուիլ: Եթէ ձեր մանուկը կարգ մը պատճառներով մանկապարտեզ չէ յաճախած, լաւ կ'ըլլայ, որ գոնէ ամառնային դպրոցի մը, խումբի մը մաս կազմէ նախքան վերամուտը, որպէսզի առնուազն 1-2 ժամով բաժնուի ծնողքէն: Այդ ընթացքին ծնողը պետք չէ սպասէ տուեալ հաստատութեան մէջ մինչեւ իր զաւակին վերադարձի ժամը, այլ նախընտրելի է վերադառնալ իր առօրեայ աշխատանքին: Երբեմն ծնողքին համար ալ հոգեբանօրէն դժուար կ'ըլլայ մանուկը Նոր եւ օտար միջավայրի մէջ մինակ թողուլը, սակայն որքան շուտ վարժուիք այդ կացութեան՝ այնքան լաւ:

2. Ծանօթութիւն դպրոցին եւ դպրոցական կեանքին

Մինչեւ վերամուտ ձեր մանուկին հետ այցելեցէ՛ք այն դպրոցը, ուր ան պետք է յաճախէ: Տոյց տուէ՛ք անոր իր ապագայ դպրոցին շէնքը, դասա-



րանը, զբօսանքի վայրը, խաղավայրը եւ այլն: Պատմեցէ՛ք անոր դպրոցական կեանքի մանրամասնութիւնները այդտեղ իսկ, կամ այլ առիթներով՝ տան մէջ: Եթէ որք ուրիշ դպրոց մը յաճախած էք, տարբէ՛ք ձեր զաւակը նաեւ հին (փափաքելի է

2 ծնողներու դպրոցներն ալ այցելել, երկուքին ներկայութեամբ) ծանօթացուցէ՛ք զինք ձեր ուսուցիչներուն: Պատմեցէ՛ք ձեր դպրոցական կեանքին մասին:

3. Դպրոցը՝ որպէս երջանկութեան աղբիւր

Մեր հասարակութեան մէջ ամրացած եւ կարծրացած մօտեցում մը կայ, որուն համաձայն, դպրոցը միայն գիտելիք ստանալու տեղ է: Թէ՛ ծնողներէն, թէ՛ ուսուցիչներէն շատեր շեշտը կը դնեն գիտելիքին վրայ: Սակայն ոչ պակաս, թերեւս Նոյնքան ու ավելի կարեւոր են ոչ թէ դպրոցին ջամբած գիտելիքները, այլ այն յարաբերութիւնները, զորս մանուկը կը ձեւաւորէ դպրոցական տարիքին: Դպրոցը միջավայր մըն է, ուր կը ձեւաւորուի ձեր մանուկին յուզական աշխարհը: Խօսեցէ՛ք անոր հետ, թէ ինչքան լաւ կ'ըլլայ, երբ ան դպրոց մեկնի, քանի որ Նոր ընկերներ կ'ունենայ: Խօսեցէ՛ք անոր հետ յոյզերու եւ զգացումներու մասին: Պատմեցէ՛ք, թէ դուք ինչ կը զգայիք, երբ առաջին անգամ դպրոց գացիք: Նախապատրաստեցէ՛ք մանուկը այն ապրումներուն, զորս կրնայ ունենալ՝ շեշտը դնելով հիմնականաբար դրա-



կաններուն վրայ՝ յուզմունք, ուրախութիւն, հիացմունք, ոգեւորութիւն եւ այլն: Սակայն յուշեցէ՛ք նաեւ, որ մանուկը կրնայ ունենալ նաեւ վախի, անորոշութեան կամ այլ բացասական զգացումներ, եւ որ այդ բոլորը բնական են, եւ այդ պահուն պետք է հանդարտ մնալ եւ կեդրոնանալ ուրիշ բաներու վրայ: Ձեր զաւակը համոզեցէ՛ք, որ դպրոցը ոչ թէ միայն Նոր բաներ սորվելու տեղ է, այլեւ Նոր ընկերներու, Նոր ուսուցիչներու հետ ծանօթանալու վայր: Դրական ընկերային յարաբերութիւնները շատ դէպքերու պարագային ավելի նպաստաւոր ազդեցութիւն կ'ունենան մարդու հետագայ կեանքին վրայ, քան ձեռքբերուած գիտելիքները:

4. Գիրքեր կարդալ՝ ոչ թէ միայն մանուկներուն համար


Մանուկին սորվեցնելու ամենալաւ միջոցը անոր օրինակ հանդիսանալն է: Ձեր զաւակին մէջ ընթերցանութեան նկատմամբ սեր արթնցնելու միջոցը գիրք կարդալն է: Օրուան մէջ մէկ ժամ գիրք կարդալու յատկացուցէ՛ք: Երբ դուք կը կարդաք ձեր զաւակին համար, ընթերցանութիւնը դարձեցուցէ՛ք ամենահետաքրքրական տեղը եւ շարունակութիւնը ձգեցէ՛ք յաջորդ օրուան, որպէսզի հետաքրքրութիւն ունենայ յաջորդ օրն ալ ունկընդրելու: Կարեւոր է նաեւ, որ մանուկը իր ընտանիքի անդամներուն գիրք կարդալը տեսնէ պարբերաբար: Հետեւաբար անհրաժեշտ է սովորութիւն մշակել եւ անոր ներկայութեան գբաղիլ ընթերցանութեամբ:



ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԶԱԿԱՆԸ ԱՊՅ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԵՐՈՒՆ ԸՆԹԱՑԵՒՆ 8 ՄԵՏԱԼ ՆՈՒԱԾԵՑ

«Արմենիա»- Պելլառուսի մեջ ԱՊՅ երկրորդ խաղերուն Հայաստանի Հաւաքականը 8 մետալ նուաճած է: Հայաստանի պատուիրակութեան մաս կը կազմեն աւելի քան 140 պատանի մարզիկներ հետեւեալ մարզածներուն մէջ. Բռնցքամարտ ազատ եւ յունահռոմեական ոճի ըմբշամարտ, ճիւտօ, քարաթէ, աթլէթ, լող, վոլէյպոլ, ծովափնեայ վոլէյպոլ, սամպօ, նետաձգութիւն, հրաձգութիւն, խոտի հոքեյ եւ մարմնամարզութիւն: Հայաստանի հաւաքականը 6-րդն է իր ութ մետալներով:



Խաղերու փակման արարողութիւնը տեղի ունեցաւ Օգոստոս 13-ին:

ԸՄԲԻՇ ԿՆԵԱՉ ԻՊՈՅԵԱՆԸ ՅԱՂԹԱՑ Է ԱՏՐՊԵՅՃԱՆՑԻ ԵՒ ԹՈՒՐԵ ՄՐՏԱԿԻՑՆԵՐՈՒՆ



Յորդանանի մէջ ընթացող ըմբշամարտի աշխարհի երիտասարդական առաջնութեան մրցումներուն Հայաստանի ներկայացուցիչ Կնեաչ Իպոյեանը 1/8 երգափակիչ խաղերուն ընթացքին 3:2 հաշիւով յաղթեց ատրպէյճանցի մարզիկին: Քառորդ եզրափակիչի ընթացքին Իպոյեան 6:3 հաշիւով յաղթելով թուրք մրցակիցին անցաւ կիսաեզրափակիչ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՖՈՒԹՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑԵՒՆ 100 ՄԻԼԻՈՆ ԵՐՈՒՆ ԳԵՐԱԶԱՆՑԱԾ ՓՈՒԱՆՅՈՒՄՆԵՐԸ

Ստորեւ կը ներկայացնենք ֆութպոլի պատմութեան ընթացքին 100 միլիոն երոն գերազանցած 16 փոխանցումները:

Նէյմար 222 միլիոն եւրօ «Պարսելոնա»-էն «Փարիզ Սան ժերման» 2017թ.

Քիլիան Էմպապիտէ 180 միլիոն եւրօ «Մոնաքօ»-էն «Փարիզ Սան ժերման» 2017թ.

Ֆիլիպիտէ Զուրթիսիօ 135 միլիոն եւրօ «Լիվըրպոլ»-էն «Պարսելոնա» 2018թ.

Օսման Տեմպէլէ 135 միլիոն եւրօ «Պորուսիա Տորթմունտ»-էն «Պարսելոնա» 2017թ.

Ժաուլ Ֆելիշ 135 միլիոն եւրօ «Պենֆիքա»-էն «Չելսի» 2019թ.

Էնզո Գերանստե 121 միլիոն եւրօ «Պենֆիքա»-էն «Չելսի» 2023թ.

Անթուան Կրիզման 120 միլիոն եւրօ «Աթլէթիքօ Մատրիտ»-էն «Պարսելոնա» 2019 թ.

Ճեգ Կրիլիշ 117,5 միլիոն եւրօ «Ասթոն Վիլլա»-էն «Մանչեսթըր Սիթի» 2021թ.

Քրիստիանօ Ռոնալտօ 117 միլիոն եւրօ «Ռեալ Մատրիտ»-էն «Իւվենթոն» 2018թ.

Տեքլան Ռայս 116,60 միլիոն եւրօ «Ռեալ Մատրիտ»-էն «Արսենալ» 2023թ.

Էտեն Ագար 115 միլիոն եւրօ «Չելսի»-էն «Ռեալ Մատրիտ» 2019թ.

Ռոմելօ Լուքաքու 113 միլիոն եւրօ «Ինթըր Միլան»-էն «Չելսի» 2021թ.

Փօլ Փոկպա 105 միլիոն եւրօ «Իւվենթոն»-էն «Մանչեսթըր Իւնայթըդ» 2016թ.

Ճուլ Պելլիկիեմ 103 միլիոն եւրօ «Պորուսիա Տորթմունտ»-էն «Ռեալ Մատրիտ» 2023թ.

Կարրէթ Պելլ 101 միլիոն եւրօ «Թորքհեմ»-էն «Ռեալ Մատրիտ» 2013թ.

Հարրի Էյն 100 միլիոն եւրօ «Թորքնհեմ»-էն «Պայերն Միւնխի» 2023թ.



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 451)

Պատրաստե՛ք՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1						■						■
2									■			
3		■			■				■			
4			■									■
5				■	■	■				■	■	
6							■				■	
7		■							■			
8				■	■	■						
9	■								■	■		
10		■										
11			■									
12							■			■		

Հորիզոնական

- 1- Հիւծիլ: Պատարագիչ քահանայի վիզը բոլորող ծածկոց:
- 2- Զիմիագետ: Սուտ խօսի:
- 3- Ձայնաւոր տառեր: Սարսափ: Տարածքի միաւոր:
- 4- Հակառակ՝ ժխտական նախածանց: Երկիր մը նախապէս բնակող ժողովուրդ:
- 5- Արական անուն: Խառնատառ՝ համեղ պտուղ մը:
- 6- Կաթիլ: Հակառակ՝ տառի մը անունը: Հակառակ՝ շաղկապ:
- 7- Հակառակ՝ իբր համեմ գործածուող բոյս: Հակառակ՝ ճշմարիտ:
- 8- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Արական անուն: Եական բայ:
- 9- Տառի մը անունը: Ուռնակ:
- 10- Տեղային յաջորդութիւն: Հակառակ՝ ցաւի ճիչ:
- 11- Յարաբերական դերանուն: Հակառակ՝ 7300: Ժլատ:
- 12- Ամրանալու ռազմական յենարան: Առարկայ: Մասնիկ, որ կը տեղադրուի սահմանական եղանակի ներկայ եւ անկատար անցեալ բայերուն առջեւ:

Ուղղահայեաց

- 1- Հովուական տոպրակ: Միայն:
- 2- Հակառակ՝ անձնական դերանուն: Զաջ: Տառի մը անունը: Նմանաձայն տառեր:
- 3- Հակառակ՝ տաղ: Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ համաքրիստոնէական տօնելի սուրբ հայրերէն, որոնք յայտնի են «երկոտասան վարդապետք» անունով:
- 4- Կոճղ:
- 5- Ձայնակիչ: Հայրապետական գաւազան: Հակառակ՝ տղամարդ:
- 6- Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Դուն քուն,»:
- 7- Ասպար: Կերպաս:
- 8- Անձնական դերանուն: Գոհացում: Սիամանթոյի ծննդավայրը:
- 9- Կարօտ: Հարիւր տարի:
- 10- Հակառակ՝ ցուցական դերանուն:
- 11- Դրամ: Հակառակ՝ որսի կենդանի: Ոչ հասուն:
- 12- Եական բայ: Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւններէն (երկու բառ):

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 450)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	խ	ա	ղ	ն	ո	ր	հ	ն	է	ք		
2	ն	ր		ք	է	ա		ա	ա			
3	ւ		ա	ւ	հ	տ		կ	ա	յ	մ	
4	ն	ա	հ		ա	ն		ա		ք	է	
5	ն	ր	ա	պ	ա	ա			կ	ա	ն	
6		ա		ա	ա				ա	յ	ք	
7	ա	կ	ն	ա	ք	կ		ն	ք	է	ա	
8	յ		ն					ա	ի	լ	ն	
9	զ	ն	ւ	ա	ն	ա	շ	ն	տ		ի	
10		ն	ն	ք		ա	օ	ւ				
11	լ	ն	կ	կ	ա	ք	ա		է			
12	ա	ի		ա	ղ			ա	լ	ի	ք	

ԼՈՒԾՈՒՄ

Երկուշաբթի 21/8



25° 40°

Երեքշաբթի 22/8



23° 39°

Չորեքշաբթի 23/8



23° 38°

Հինգշաբթի 24/8



24° 37°

Ուրբաթ 25/8



24° 36°

Շաբաթ 26/8



23° 39°

Կիրակի 27/8



23° 40°

Ս. ԱՍՏՈՒԱՍԱԾԻՆՅԱՆ...

Սկիզբ՝ Էջ 1

ծորդին ի գիրկս իւր բարձեալ մարմնով, գոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն»։ Սրբազան Զայրը դիտել տուաւ, որ Ս. Կոյս Մարիամ արժանի դարձաւ իր որովայնին մէջ կրելու մարդացեալ ստեղծիչը եւ անոր ծնունդ տալով մայրական սիրով զգուելու անոր, այլ խօսքով, ան արժանացաւ բարձրութեան եւ վեհութեան առաւել քան սերովբէները եւ քերովբէները։



լու Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը։

Խօսքի աւարտին, Սրբազան Զայրը աղօթեց մեր հայրենիքին՝ Զայաստանի եւ Արցախի համար։ Աղօթեց Միջին Արեւելքի, Լիբանանի,

ծննդավայր Սուրիոյ, անոր Վսեմաշուք Նախագահին, բանակին եւ պետական բարձրաստիճան պատասխանատուներուն համար, մաղթելով, որ Ամենակալը, Աստուածամոր բարեխօսութեամբ, իմաստութեամբ եւ շնորհքով լեցնէ, մարդասիրութեամբ եւ եղբայրասիրութեամբ կռանէ, ինչպէս նաեւ հայրենասիրութեամբ եւ հողասիրութեամբ թրծէ անոնց սրտերն ու հոգիները։ Վերջապէս, ան աղօթեց հիւանդներուն, տառապողներուն, նահատակներուն, բանտարկեալներուն եւ գերիներուն համար։



բանալու մեր երկնաւոր Սօր եւ Անոր բարեխօսութիւնը խնորելու մեր գաւազան կարիքներուն համար եւ իր հետ միասնաբար փառաւորելու Ամենասուրբ Երրորդութիւնը՝ Զայրը, Որդին եւ Սուրբ Զոգին», հաստատեց ան։

Պատարագէն ետք, եկեղեցւոյ շրջափակէն ներս տեղի ունեցաւ խաղողօրինեքի աւանդական արա-



Սրբազան Զայրը անդրադարձաւ Աստուածամոր առաքինի կենցաղին, մաքրամաքուր սրբութեան եւ անբժութեան։ Ան յատկապէս շեշտեց Աստուածամոր հեզութիւնը, խոնարհութիւնն ու հնազանդութիւնը, որոնց շնորհիւ Ս. Կոյս Մարիամ Աստուծոյ հաճութիւնը շահեցաւ եւ Աստուած զինք ընտրեց դառնալու իր բնակավայրը, գահը, աթոռը եւ այնտեղ բնակեցաւ եւ փառաւորուեցաւ։

րողութիւն, ԶՄԸՄ-ի տարագաւոր սկաւտներու ներկայութեամբ։

Այնուհետեւ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութեամբ եւ ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին նուիրուած ԶՄԸՄ-ի աւանդական տողանցք՝ Զեսապի, Զալէպի, Գամիշլիի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու փողերախումբերուն եւ սկաւտներուն մասնակցութեամբ։ Տողանցքը ընթացք առաւ Ս. Աստուածածին եկեղեցիէն, Զեսապի Զոգեւոր տեսուչ Զոգչ. Ս. Անդրանիկ Վրդ. Զիրիմեանի գլխաւորութեամբ եւ Ազգ. Վարչութեան անդամ Արմեն Գասպարեանի մասնակցութեամբ։ Տողանցքին միացան նաեւ Զեսապի պետական ակադեմիան եւ Զեսապի Զայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ պատուելի Շանթ Ակիշեանը։ Զամալիի մուտքին տողանցքին միացան Առաջնորդ Սրբազան Զայրը եւ Զոգչ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեանը։ Զամալիի ներս տեղի ունեցաւ պաշտօնական հաւաք, ուր ներկայ գտնուեցաւ նաեւ Սուրիոյ Զայ Աւե-



վորդի գաւակները, յատկապէս Ս. Կոյս Մարիամին անունը կրողները։ Սրբազան Զայրը մեծապէս գնահատեց Զեսապի Զոգեւոր Տեսուչ Զոգչ. Ս. Անդրանիկ Վրդ. Զիրիմեանը, որ լրջութեամբ, հաւատքով եւ սիրով յաջողուց տաղաւար տօնին նուիրուած բոլոր նախաձեռնութիւնները։ Ան գնահատեց Զոգչ. Ս. Մանուկ Վրդ. Եղիայեանը, եկեղեցւոյ թաղական խորհուրդը, տիկնանց յանձնախումբը, դպրաց դասը եւ բոլոր անոնք, որոնք իրենց ներդրումը բերին արժանաւորապէս յիշատակե-

րանիկ Վրդ. Զիրիմեանի գլխաւորութեամբ եւ Ազգ. Վարչութեան անդամ Արմեն Գասպարեանի մասնակցութեամբ։ Տողանցքին միացան նաեւ Զեսապի պետական ակադեմիան եւ Զեսապի Զայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ պատուելի Շանթ Ակիշեանը։ Զամալիի մուտքին տողանցքին միացան Առաջնորդ Սրբազան Զայրը եւ Զոգչ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեանը։ Զամալիի ներս տեղի ունեցաւ պաշտօնական հաւաք, ուր ներկայ գտնուեցաւ նաեւ Սուրիոյ Զայ Աւե-

ԱՌԱՋԻՆ ԱՆՊԱՄ ԸԼԼԱՆՈՎ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ ՈՒԽՏԵՐԹ՝ ՔԵՍԱՊԻ Ս. ԱՍՏՈՒԱՍԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՆՉԵՒ ԷՍԿԻՐԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱՍԱԾԻՆ ՄԱՏՈՒԻ

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին նուիրուած եկեղեցական արարողութիւններուն կարգին, Ուրբաթ, 11 Օգոստոս 2023-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ ուխտերթ՝ Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցիէն մինչեւ Էսկիրանի Ս. Աստուածածին մատուռ, հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ՝ Բերիոյ Զայրոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի։



Ուխտերթը կազմակերպուած էր Զեսապի Զոգեւոր Տեսուչ Զոգչ. Ս. Անդրանիկ Վրդ. Զիրիմեանի գլխաւորութեամբ։ Ուխտերթին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Ազգ. Կրօնական Ժողովի ատենապետ Զոգչ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամ Արմեն Գասպարեան, պատուելի Սիմոն Տէր Սահակեան, Զեսապի եկեղեցւոյ թաղական խորհուրդը եւ դպրաց դասը, քեսապահայ բարեսիրա-



կան, մարզական եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ եւ ուխտաւոր մեծաթիւ ժողովուրդը։ Ուխտերթին մասնակցեցան նաեւ ԶՄԸՄ-ի Զալէպի մասնաճիւղի սկաւտները։

Ուխտերթը ընթացք առաւ Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցիէն, Սրբազան Զօր «Տէրունական Աղօթք»-ի արտասանութեամբ։ Զեսապի իրաշագճեղ բնութեան մէջ, Աստուածամոր պատկերով ուխտաւորները առաջնորդուեցան դէպի Էսկիրան, ճամբու ընթացքին մեր սուրբ հայրապետներուն շարականները երգելով։



Էսկիրանի մուտքին, ուխտաւորները դիմաւորուեցան ԶՄԸՄ-ի Զեսապի Մասնաճիւղի փողերախումբին կողմէ եւ ազգայնաշունչ նուագակցութեամբ եւ ջահեր բռնած առաջնորդուեցան դէպի Ս. Աստուածածին մատուռ, ուր Սրբազան Զայրը ջորհնեք կատարեց, աղօթելով, որ օրինուած ջուրը բժշկէ ուխտաւորներուն ցաւերն ու հիւանդութիւնները։

Այնուհետեւ, Սրբազան Զայրը իր հայրական պատգամը ուղղեց ժողովուրդին։ Սրբազան Զայրը աղօթեց, որ ուխտի թափօրին ընդմէջէն Ամենակալը իր աստուածային սիրոյ կենդանի ջերմութեամբ լեցնէ իւրաքանչիւր ուխտաւորի սիրտը եւ ներեւ անոր մեղքերն ու յանցանքները։

Սրբազան Զայրը դիտել տուաւ, որ ուխտաւորը ճանապարհորդն է, որ իր կեանքի ընթացքին ուխտի տրոհէ կ'ընթանայ, հասնելու համար իր Արարիչին ճանաչողութեան, այնպէս ինչպէս Աբրահամ կատարեց իր կեանքի ընթացքին։

Սրբազան Զայրը ուխտերթը գեղեցիկ առիթ համարեց, որ մեզ կը իրաւիրէ ինքնագիտակցութեամբ Աստուածամայրը գերագոյն օրինակ ունենալու եւ խորհրդածելու իր կեանքի հանգրուաններուն մասին, որոնք կը յատկանշուին խոնարհութեամբ, հեզութեամբ, անձնուրացութեամբ, ծառայութեամբ եւ Աստուծոյ կամքին կատարեալ հնազանդութեամբ։ «Աստուածամայրը իր կեանքի օրինակով նոր կեանք պարգեւեց մարդկութեան եւ Զրիստոսով մեր առջեւ երկնիքի դուռը բացաւ», հաստատեց Սրբազան Զայրը։

Եզրափակելով, Սրբազան Զայրը մաղթեց, որ Ամենակալը ընդունի ուխտաւորներուն աղօթքները։

տարանական համայնքի համայնքապետ վերապատուելի դոկտ. Յարութիւն Սելիմեան։

Արաբերէն եւ հայերէն լեզուներով խօսքեր արտասանուեցան։ ԶՄԸՄ-ի փողերախումբը իր խանդավառող նուագով տօնական մղժնուլորտ ստեղծեց։

Այնուհետեւ, իր սրտի խօսքը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Զայրը։ Ան Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը կամրջեց ԶՄԸՄ-ի

աւանդական տողանցքին, գոյգ առիթներ, որոնք կու գան տօնական մթնոլորտի մէջ մեր սրտերն ու հոգիները ուրախութեամբ լեցնելու եւ մեզ գօտեպնդելու։

Սրբազան Զայրը իր հայրական օրհնութիւնները փոխանցելով գնահատեց ԶՄԸՄ-ի մեծ ընտանիքը, որ Զեսապի մէջ տարիներու աւանդութիւնը պահելով, նոր աւիւն եւ յոյս կը ներշնչէ նոր սերունդի գաւակներուն։